Ե. ՏԱՐԻ 1396 ԹԻՒ ՀԱՅՈՑ 4380 ՆԱՒԱՍԱՐԴ 19 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 29 ՕԳՈՍՏՈՍ 1888 (Ն. Տ.) 10 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1888 3 ՄՈՒՀԱՐՐԷՄ 1306

20 ՓԱՐԱ

ՆԱՄԱԿ ԿԱՄ ՈՐ ԵՒ ԻՑԷ ԳՐՈՒԹԻՒՆ ՊԷՏՔ Է ՈՒՂՂԵԼ
ԱՌ ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ
ԱՐԵՒԵԼՔ ՕՐԱԳՐԻ
Ղալաթիա, Նորատունկեան-խան

ليه‌ده غلطه‌ده نورادونكيان خانده ارەولك
غزته‌سى اداره‌سنه

Direction du journal AREVELK
Noradounghian Han, Galata
CONSTANTINOPLE

ԱՐԵՒԵԼՔ
ՕՐԱԳԻՐ
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱԶԳԱՅԻՆ

20 ՓԱՐԱ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Կ. Պոլսոյ համար	Տարեկան	դահեկան արծաթ	160
» »	Վեցամսեայ	» »	80
» »	Եռամսեայ	» »	40
Գաւառաց » և տեղական թղթատարով	տարեկան	»	240
Գաւառաց համար եւ տեղական թղթատարով	վեցամսեայ	» »	120
Օտար երկիրներէ	տարեկան	ֆրանք	58
» »	վեցամսեայ		26

Դուրս զրկուած լրագրաց ճամբու ծախքը Տնօրէնութեան վրայ է. Խմբագրութեանս զրկուած նամակ կամ գրութիւն ետ չդարձուիր.

Les annonces sont reçues
AUX BUREAUX DU JOURNAL

Կ. ՊՈԼԻՍ, 29 ՕԳՈՍՏՈՍ, 1888

ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԱ ԵՒ ԻՏԱԼԻԱ ԵՒ ԿԱԹՈԼԻԿՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՍ

Պ. Քրիսփիի պաշտօնական թերթերէն մին, Հռոմայ Իթալի ֆրանսերէն լրագիրն, հետեւեալ հատուածը կը հրատարակէ իւր վերջին թիւերէ միոյն մէջ. (*)

«Երեւելի Քափուչին մը, Միսիոնար ի Պէրութ, որ այս օրերս յԻտալիա վերադարձած է, ի Ֆիորենձա երկար խորհրդակցութիւն մ'ունեցաւ Կաթոլիկ Միսիոնարութեանց Ընկերութեան անդամներուն հետ։ Սուրիոյ կողմերն իտալերէն լեզուին ծաւալման համար այս Քափուչին խորհուրդ տուեր է սուրիական եզերաց վրայ շոգենաւուց փոքր երթեւեկութիւն մը հաստատել։ Այս գաղափար նկատողութեան արժանի է. զի իտալերէնն այն կողմեր հետզհետէ կը կորսուի, տեղի տալով Ֆրանսերէնի և մինչեւ իսկ գերմաներէնի։ Մէկ կամ երկու շոգենաւով թղթատարական սպասարկութիւն մը մեր լեզուին գործածումը պիտի պահպանէ։ Կարելի չէ չտեսնել այս երկրաց մէջ Ֆրանսացի Միսիոնարաց ահագին յառաջդիմութիւնները։ Ֆրանսա բան չի խնայեր Արեւելից մէջ ծաւալելու համար։ Ի Պէրութ Ճիզուիթաց Համալսարանն յոյժ բարգաւաճ է։ Այս տարի բժշկական Տոքթորութեան վկայագիր առաւ վաթսուն երիտասարդաց։ Ֆրանսա տարեկան 60,000 Ֆր. նպաստ կուտայ սոյն Համալսարանի, որ Կամպէթթայի ժամանակ մեծկակ գումար մ'ընդունեց իբրեւ նպաստ, 300,000 Ֆր., կ'ըսուի։ Այդ պետական մարդ բնաւ խղճահարութիւն չունեցաւ առատ նպաստներով պաշտպանելու Ճիզուիթաց ձեռամբ հիմնեալ և կառավարեալ Համալսարան մը։ Անհաշուելի են օգուտներն զորս Ֆրանսա կը քաղէ սոյն Համալսարանէ, և ի Փոքր Ասիա իւր Միսիոնարութեանց և կրօնային հաստատութեանց ծաւալումէն։»

⁂

Իտալիա եւս քան զեւս ուշադրութեամբ կը դիտէ Ֆրանսայի Կառավարութեան ընթացքն, որ իւր երկրին մէջ հալածելով և հարուածելով հանդերձ պապական եկեղեցին և պապական կղերն, օտար երկրաց, մանաւանդ Արեւելից մէջ իւր ազդեցութեան ծաւալման գործիք կ'ընէ զանոնք։ Այս կեղծաւոր քաղաքականութեան Իտալացիք կորովալից պատասխան մը կուտան, որ բովանդակ քաղաքակիրթ եւ ազատասէր աշխարհին համակրանքն Իտալիոյ կողմը պիտի դարձունէ։ Իտալիոյ ազատական կառավարութիւնն ևս, մանաւանդ ընդ տնօրինութեամբ իտալացի ազատականաց երեւելի պարագլխին՝ Պ. Քրիսփիի, վէճ ունի իտալացի կղերին և Պապականութեան հետ. Իտալիա ևս օրինաւորապէս փափաքող է զիւր ազդեցութիւն օտար երկրաց մէջ ծաւալելու. Բայց Իտալիա Արևելից մէջ Ֆրանսայէն տարբեր քաղաքականութեան մը կը սկսի հետեւիլ. Իտալիա կ'ուզէ զիւր ազդեցութիւն ծաւալել աշխարհական միջոցներով, աշխարհական դպրոցներ բանալով, շոգենաւային երթեւեկութիւն և թղթատարական սպասարկութիւն հաստատելով, ի ձեռն աշխարհականաց. Եթէ Ֆրանսացիք իրաւամբ կը խորշին պապական կղերին յետադէմ և չլատիչ ոգիէն, ի՞նչպիսի մաքիավէլեան քաղաքականութիւն մ'է այն որ նոյն ոգւով կ'ուզէ տոգորել խեղճ Արեւելցիներն, ի մեծ փառս ֆրանսական քաղաքակրթութեան. Եթէ Ճիզուիթները վնասակար են մարդկային ազգին ա՛յն մասին որ Ֆրանսա կը կոչուի, ի՞նչպէս կրնան օգտակար լինել մարդկային ազգին ա՛յն հնագոյն մասին որ Արեւելք կը կոչուի. Եթէ Պապականութիւնը մարդկային ազգին միտքերը կը ստրկացնէ Ֆրանսայի մէջ և անոր համար Փարիզի Կառավարութիւնը խիստ միջոցներ ձեռք կ'առնու Պապականութեան դէմ, նոյն գործիչներ և նոյն հաստատութիւն ի՞նչպէս կրնան յառաջդիմութեան եւ քաղաքակրթութեան միջոց լինել Արեւելից մէջ.

Ահա այս երկդիմի ընթացքէ կը խորշի իտալական պայծառ միտքն. Իտալացիք ալ դպրոցներ պիտի բանան Արեւելից մէջ, և իրենց լեզուն պիտի սովրեցնեն Արեւելցիներուն. բայց իրենց ազդեցութիւնը ծաւալելու համար ուրիշ ազգաց ընկալեալ նուիրական հաստատութիւնները չպիտի հարուածեն, կրօնափոխական միջոցներու չպիտի դիմեն, ճիզուիթական [illegible] նուաստութեանց յանձնառու չպիտի լինին. Եւ այսպէս Իտալացիք, որ անցելոյն մէջ եւրոպեան քաղաքագիտութեան վարպետներն եղան, ներկային մէջ ալ ճշմարիտ քաղաքագիտութեան կարեւոր դաս մը պիտի տան Ֆրանսացիներուն.

Այս միջոցիս պապական գործակալներուն գլխաւոր հնարքն է Արեւելցիներն հրապուրել, ցոյց տալով թէ ժողովուրդ մը կաթոլիկութիւն ընդունելուն պէս Ֆրանսայի քաղաքական պաշտպանութեան ներքեւ կը մտնէ. Այսպէս կը քարոզէ՝ գուշաւոր բանիւք՝ Լէոն ԺԳ, որ ինքզինք Օսմ. Տէրութեան բարեկամ կը ցուցնէ. Այսպէս կը քարոզեն Լէոն ԺԳի գործակալներն, որք Բ. Դրան ալ կ'ըսեն թէ Թուրքիոյ Քրիստոնեայք կաթոլիկութիւն ընդունելով աւելի հաւատարիմ պիտի լինին Օսմ. Տէրութեան. Բայց ուշիմ ընթերցողներ ցարդ հասկցած են անշուշտ թէ ո՛րչափ խաբէական են այս յայտարարութիւնք.— Թո՛ղ թէ Թուրքիոյ Քրիստոնեայք պէտք չունին օտար Տէրութեանց պաշտպանութեան, քանի որ կը վայելեն Վեհ. Սուլթանին հայրական պաշտպանութիւնը, բայց Ֆրանսա միթէ կաթոլիկութի՞ւնը կը պաշտպանէ. Ինչո՞ւ համար ուրեմն Ֆրանսա իւր բոլոր հոգածութեան առարկայ կ'ընէ Սուրիոյ կաթոլիկներն, և անտարբեր է Տիգրանակերտի, Միջագետի, Պուլկարիոյ, Պոսնա-Հէրսէքի, Մակեդոնիոյ և Ալպանիոյ կաթոլիկաց նկատմամբ. Իտալիա իբրեւ կաթոլիկ Տէրութիւն միթէ կաթոլիկութի՞ւնը կը պաշտպանէ. Ինչո՞ւ համար ուրեմն Իտալիա ուշադրութիւն կը նուիրէ Ալպանիոյ կաթոլիկներուն միայն, և անտարբեր է Սուրիոյ և Փոքր Ասիոյ կաթոլիկներուն. Աւստրիա-Ունկարիա, իբրեւ կաթոլիկ Տէրութիւն, միթէ կաթոլիկութի՞ւնը կը պաշտպանէ. Ինչո՞ւ համար ուրեմն Վիեննայի Կառավարութիւնը զիւր բովանդակ ուշադրութիւն կը նուիրէ և կը նուիրէ Պոսնա-Հէրսէքի և Մակեդոնիոյ կաթոլիկներուն, և անտարբեր է կաթոլիկ Քիլտանիներուն և Մելքիթներուն. —Որովհետեւ ո՛չ Ֆրանսա, ո՛չ Իտալիա, ո՛չ ալ Աւստրիա, թէեւ երեքն ալ կաթոլիկ Տէրութիւններ, լոկ ի սէր կաթոլիկութեան չեն գործեր. կամ թէ, ռամկօրէն բացատրութեամբ մը, Հռոմայ եկեղեցւոյն գեղեցիկ սեւ աչերուն սիրոյն համար չեն գործածեր իրենց քաղաքական ազդեցութիւն. Իրենց ազդեցութիւն կամ պաշտպանութիւն երկրային է ո՛չ թէ երկնային. այսինքն, Ֆրանսա Սուրիոյ կողմը քաղաքական հայեացքներ ունի, Իտալիա Ալպանիոյ եզերաց մօտաւորութեան պատճառաւ ուշադրութեամբ կը դիտէ այն կողմեր, և Աւստրիա՝ զՄակեդոնիա. Բայց եթէ սուրիացի կաթոլիկը բնակէր Հէքքեարիի սահմանաց մէջ, չպիտի վայելէր Ֆրանսայի ուշադրութիւնն. Եթէ կաթոլիկ Ալպանիացին կամ Միրտիթը բնակէր Եփրատի ափանց վրայ, իտալեան համակրանաց առարկայ չպիտի լինէր, և եթէ կաթոլիկ Պօշնակը կամ Մակեդոնացին Եւդոկիոյ կողմերն հաստատուած լինէր, Աւստրիոյ աչքն իւր վրայ յառեալ չպիտի ունենար. Ապա ուրեմն [illegible] հիմն է Լէոն ԺԳի յայտարարութիւնը թէ կաթոլիկ կրօնն ընդունելովն իսկ ժողովուրդ մը առարկայ կը դառնայ կաթոլիկ Տէրութեանց համակրման եւ պաշտպանութեան, և ասով միջոց կը գտնէ աշխարհային բարօրութեան.

Միեւնոյն դիտողութիւն կը պատշաճի նաեւ Օրթոտոքսութեան Ռուսիոյ կողմէ պաշտպանուելուն. Եթէ ցարդ Ռուսիա Օրթոտոքսութեան պաշտպան հանդիսացաւ, ո՛չ թէ ի սէր Օրթոտոքսութեան էր, այլ որովհետեւ իւր պաշտպանած օրթոտոքս ցեղերը Օսմ. Տէրութեան սահմանաց մէջ բնակեալ էին. Բայց եթէ երբեմն Յոյները, Սերպերն և Ձեռնակորայիներն և վերջին ժամանակներս ալ Պուլկարները բնակեալ լինէին Իտալիոյ կամ Սպանիոյ մէջ և ո՛չ թէ Թուրքիոյ մէջ, չպիտի վայելէին Ռուսիոյ պաշտպանութիւնը. Ռուսիա աչք ունէր Օսմ. Տէրութեան այլ և այլ երկիրներուն վրայ, ուր փափաքելի կը համարէր իւր ազդեցութեան տարածումն, և այն երկիրներու մէջ օրթոտոքս ժողովրդոց հաստատուած գտնուիլն իւր քաղաքականութեան գործիք մ'եղաւ լոկ.

Այս ամեն օրինակներ կարծենք վըճռապէս կ'ապացուցանեն թէ կրօնն առանձինն դեր չունի քաղաքականութեան մէջ, երբ աշխարհագրական պարագաներ և քաղաքական շահեր չեն պահանջեր որ կրօնը դեր մ'ունենայ քաղաքականութեան մէջ. Երբ այս ճշմարտութիւն միանգամ ընդ միշտ պայծառապէս հասկցուի, պապական գործակալներուն հզօրագոյն կարծուած զէնքն ևս իսպառ կը փշրուի. Թուրքիոյ Հայք կը վայելեն Վեհ. Սուլթանին հայրական պաշտպանութիւնն, և ա՛յնչափ սերտիւ յարեալ են իրենց դարաւոր ազգային եկեղեցւոյն, որ օտար Տէրութեանց պաշտպանութիւնը վայելելու սին և անտեղի յոյսերով այն եկեղեցին լքանելու վատութիւնը վայրկեան մ'անգամ իրենց միտքէն չեն անցըներ.—Եւ զայս կ'ապացուցանէ ամենայն ինչոր տեղի կ'ունենայ մեր շուրջ, յորէ անտի հրատարակման Լէոն ԺԳի կոնդակին.

(*). Ղալաթիոյ Ֆրանսերէն թերթերն ևս արտատպեցին այս հատուած.

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՑԱՐՆ և կայսերական գերդաստանն երկու ամսոյ չափ պիտի բնակին ի Խրըիմ և ի Կովկաս. Սեպտ. 5ին շատ մը հետեւորդներով ուղեւորեցան ի Լիվատիա.

—ՊՈՒԼԱՆԺԷ զօրավար ո՞ւր գնաց. Մարդ չի գիտեր. Ֆրանսայէն մեկնիլն իմացուած է, բայց ո՛չ ուսկէ ըսուած է թէ ո՛ւր կ'երթայ. Ոմանք կ'ըսեն Շուէտ, այլք ըսին Ռուսիա. Բայց Փեթերսպուրկէ սեպտ. 5 թուով հեռագիր մը կ'ըսէ. «Զօր. Պուլանժէ չերեւցաւ ի Ռուսիա. Ռուս լրագիրք կ'ըսեն թէ զօրավարը բնաւ համակրանք չպիտի գտնէ Ռուսիոյ պաշտօնական ակմբոց մէջ, և թէ ինք քաջ գիտէ զայս.»

—ԿԱՐՆԻԷ անուն [illegible] Գերմանիոյ Փարիզի դեսպանատան պաշտօնէի մը վրայ ռեվոլվեր արձակուելուն առթիւ, Պիսմարք Իշխանին թերթը, Նորթ Տէյչէ Ալկեմայնէ Ցայթունկ, բուռն յօդուած մը կը հրատարակէ Ֆրանսայի դէմ, ըսելով որ, եթէ Կարնիէ պատասխանատու չէ իւր ըրածին համար, գործուած ոճրին պատասխանատուութիւնը կ'իյնայ բովանդակ ֆրանսական երկրին ու ժողովրդեան վրայ.

—ՖՐԵՏԵՐԻԿ ԿԱՅՍԵՐ դստերք մի զմիոյ կնի կը նշանուին. Երէկ նշանուեցաւ Սոֆի Իշխանուհին, և այժմ սեպտ. 5 թուով Պերլինէ հեռագիր մը կը ծանուցանէ թէ Ֆրետերիկ կայսեր հօրեղբօր թոռն՝ Ֆրետերիկ-Քարլ հանգուցեալ Իշխանին որդի Լէօբոլտ Իշխան խնդրած է Ֆրետերիկ կայսեր չորրորդ և կրտսերագոյն դստեր՝ Մարկարիտա Իշխանուհւոյն ձեռքը. Բայց ստացե՞ր է զայն, դեռ չգիտենք.

—ՅՈՒՆԱՍՏԱՆԻ գահաժառանգին Վիլհէլմ կայսեր քրոջ Սոֆի Իշխանուհւոյն հետ նշանուելուն առթիւ, Թայմզին թղթակիցը կը ծանուցանէ թէ այս նշանախօսութիւն տեղի ունեցաւ Աւկուսթա և Ֆրետերիկ-Վիքթորիա մայրկայսրուհեաց հաւանութեամբ. Կայսերական գերդաստանը դեռ սգոյ մէջ գտնուելով, նշանախօսութեան առթիւ սովորական հանդէսք տեղի չունեցան. «Այս իրողութիւն նոր լոյս մը կուտայ վերջին օրերս Դանիոյ և Յունաստանի Թագաւորաց ի Պերլին այցելութեան վրայ (*), և կը ցուցնէ նոր քայլ մը դէպ ի հաշտութիւն Դանիոյ և Պրուսիոյ վեհապետական գերդաստանաց. Նաեւ այս իրողութեամբ Հօէնձոլլըրնեանք, խնամութիւն հաստատելով արեւելեան Տէրութեան մը հետ, մօտէն կը շահագրգռին Արեւելեան խնդրոյն ապագայ երեւոյթներուն, մանաւանդ հելլենական թերակղզւոյ վերաբերող պարագաներուն.»

—Պ. ՌԻՍՏԻՃ Միլան Թագաւորին հետ երկար խորհրդակցութիւն մ'ունեցաւ Սերպիոյ ներքին վիճակին վրայ.

—Պ. ՔՐԻՍՓԻ Պիսմարք Իշխանին հետ նոր տեսակցութիւն մը պիտի ունենայ նոյմ. ամսուն մէջ.

—ՉԻՆ ԵՒ ԱՆԳԼԻԱ. Չինական կառավարութիւնն, անգլահնդիկ կառավարութեան և Թիպէթցիներուն միջեւ ծագած կռիւներէն ևս քան զեւս յուզուելով, Անգլիոյ դիտաւորութեանց վրայ բացատրութիւն խնդրեց ի Լոնտոն, և պատասխան ընդունեցաւ թէ Թագուհւոյն կառավարութեան միակ դիտումն է արտաքսել այն Թիպէթցիներ որք արշաւած են անգլիական թեւարկութեան ներքեւ գտնուող երկիր մը, ի Սիքքիմ. Ի Լոնտոն կը կարծուի թէ Չինաստան ձեռքի տակէ կը քաջալերէ Թիպէթցիները.

—ԻՏԱԼԱԿԱՆ ՆՈՐ ԳՐԱՒՈՒՄ. Հռոմ, 4 սեպտ.— Թրիպունա լրագիրն յոյժ հետաքրքրաշարժ յօդուած մը կը հրատարակէ. Եզրակացութիւնը սա է թէ Իտալիա պէտք է գրաւէ Միջերկրականի մի ո՛և է կէտ. [illegible] 5,000 երիտասարդ Չեխերու [illegible] մը տեղի ունեցաւ բացօդեայ վայր մը, մերձ ի Փրակա. Այս կուսակցութեան պատկանող բոլոր Երեսփոխանք ներկայ էին գումարման. Գլխաւոր բանախօսութիւնն ըրաւ Պ. Կրեկր, որ չեխերէն լեզուի իրաւունքները ջատագովեց, եւ անդրալեռնական կղերին հետ ո՛և է համերաշխութիւն բացէ ի բաց մերժեց. բացատրեց երիտասարդ Չեխերուն սիրական գաղափարն, այսինքն Պոհեմիոյ կամ Չեխաստանի Թագաւորութեան կազմակերպութիւնն ըստ օրինակի Մաճառստանի Թագաւորութեան. Հակահրէական խմբագիր մը խօսք առնուլ ուզելով, հարկադրեցաւ լռութիւն պահել. զի Պ. Կրեկր յայտարարեց թէ հակահրէական շարժում մը չուզեր խառնել այս բուն ազգային-չեխական շարժման. Պ. Կրեկրի յառաջ վարած շարժումն և երիտասարդ Չեխերուն ընտրական յաջողութիւնները սաստկապէս կը յուզեն Հին Չեխերն, որք ընդհանուր ժողով պիտի գումարեն՝ իրենք զիրենք պաշտպանելու համար Երիտասարդ Չեխ կուսակցութեան դէմ, որ արարքը ցայս վայր կ'արհամարհէին.

—ԼԷՕՅԻ ՀՈՒԱՅԹԻ Եւրոպա երթալու համար արեւելեան երկաթուղիով Արեւ. Ռումէլիէն և Պուլկարիայէն անցած միջոցին Ֆերտինանտ Իշխան և պուլկար կառավարութիւնը բացառիկ պատուով մեծարեցին զնա.

—ՀԵԼԼԷՆ արժեթուղթերը վրայ դրին ի լուր նշանախօսութեան Կոստանդին Իշխանին ընդ Սոֆի քրոջ Վիլհէլմ կայսեր. Իշխանը 21րդ տարին նոր մտած է, իշխանուհին ալ 18 տարեկան և 3 ամսու է.

—ԼԵՒՈՆ ԺԳ յանձնարարեր է կարդինալներու յանձնաժողովին քննել թէ, երբ պատերազմ ծագի Ֆրանսայի եւ Իտալիոյ միջեւ, Պապը կրնա՞յ տակաւին ի Հռոմ մնալ.

—ՎԻԼՀԷԼՄ Ա կայսեր կտակներէն քաղուած մը հրատարակելէ ետքը, Վիլհէլմ Բ. կայսր կ'ուզէ քաղուած մ'ալ իւր հօր վերջին յիշատակագրերէն հրատարակել. Իւր վերջին կտակին մէջ Ֆրետերիկ կայսր կը յայտարարէ եղեր թէ ժողովրդային իրաւանց ընդարձակումն հզօրագոյն միութեան կապն է ազգին և միապետութեան միջեւ.

—Պ. ՔՐՈՒՓ ի մօտոյ Ռուսիոյ մէջ Եքաթերինոսլաւի մօտ պիտի հիմնէ իւր մեծ գործարանի մէկ ճիւղն, յատկապէս պողպատեայ թնդանօթաց շինութեան համար.

—ՇՈՒԷՏԻ Օսկար Թագաւորը Գերմանիայէն վերադառնալով, յոյժ սիրալիր ընդունելութիւն մը գտաւ իւր ժողովրդէն. Ի պատիւ իրեն ի Մալմէօ տրուած հացկերոյթի մը մէջ, բաժակ առաջարկելով Վիլհէլմ կայսեր կենաց, ըսաւ թէ Գերմանիա-[illegible]րութիւնը նոր առիթ մ'եղաւ ամրապնդելու Գերմանիոյ և Շուէտի բարեկամական յարաբերութիւններն. Օսկար Թագաւոր երախտագիտութեամբ յիշեց թէ Վիլհէլմ կայսր ո՛չ միայն իւր (Շուէտի Թագաւորին) անունը տուաւ իւր հինգերորդ որդւոյ, այլ սորա միւս անուններն ևս շուէտական են. (Օսկար—Քարլ—Կիւսթավ—Ատոլֆ անունները տրուեցան Վիլհէլմ կայսեր նորածին զաւկին).

—ՊՈՒԼԿԱՐԻՈՅ աշնանային ռազմափորձերն օտարազգի զինուորականք մասնաւոր հետաքրքրութեամբ կը դիտեն. Ծանուցուեցաւ արդէն թէ արեւմտեան Պուլկարիոյ մէջ Սոֆիայի հինգ գունդերը պիտի մաքառին Փիլիպէի հինգ գնդոց դէմ, սա յարձակելով Իհթիմանի կիրճին վրայ, և միւսը պաշտպանելով զայն. Շումլայի, Վառնայի, Ռուսճուքի, Փլեւնայի և Թրնովայի զօրքերն ալ երկու հակընդդէմ բանակներու բաժնուելով, ի Շումլա ճակատամարտ մը պիտի մղեն. Այս ռազմափորձերու վրայ օտարազգիք կը դիտեն թէ Ֆերտինանտ Իշխան, իբրեւ ճշմարիտ զինուորական, մեծաւ ուշադրութեամբ հոգ կը տանի Պուլկարիոյ

(*). Յունաստանի գահաժառանգ Իշխանը Դանիոյ Թագաւորին թոռն է, Սոֆի Իշխանուհին ալ Անգլիոյ Թագուհւոյն թոռն է.

—)(14)(—

ԹԵՐԹՕՆ ԱՐԵՒԵԼՔԻ

ԺՈՐԺ ՕՆԷ

ԿԵՆԱՑ ՊԱՅՔԱՐՆԵՐԸ

ՍԵՐԺ ԲԱՆԻՆ

Մանկամարդ աղջիկը սարսռաց։ Յարձակումն ուղղակի էր. հարկ էր անմիջապէս բացատրութեան մտնել։ Վաղուց արդէն խորհած էր թէ ի՛նչ պիտի պատասխանէր այն օրն յորում Բիէռ գար իւր երջանկութեան համարը պահանջել իրմէ։ Այդ օրն հասած էր յեղակարծ։ Եւ իւր պատրաստած գաղափարները խոյս կուտային իրմէ։ Ճշմարտութիւնն երեւցաւ իրեն, մերկ և սառն։ Ըմբռնեց թէ այն փոփոխութիւնն որ տեղի ունեցած էր յինքն, ճշմարիտ մատնութիւն մ'էր, որուն անմեղ զոհը կը լինէր Բիէռ, և զգալով որ ինքզինքը կ'այպանէր, դողալով սպասեց փղձկման այդ աղնիւ սրտին՝ այնքան դառնապէս վիրաւորեալ։ Եւ խռովեալ ձայնիւ թոթովեց.

—Բիէ՛ռ, բարեկամս, եղբայրս...

—Եղբա՜յրդ, պատասխանեց երիտասարդը դառնութեամբ։ Ա՞յդ անունը պիտի տայիր ինձ վերադարձիս։

Այս խօսքերուն առջեւ, որք կատարելապէս կը բովանդակէին կացութիւնը, Միշլին լուռ մնաց։ Կ'զգար սակայն թէ ամեն զոհողութիւն յանձն առնլու էր ինքզինքը պաշտպանելու համար. մայրը կրնար գալ վայրկեանէ վայրկեան։ Անոր և նշանածին մէջտեղ մնալով, ի՞նչ պիտի լինէր։ Վըճռական ժամ մ'էր։ Իւր սիրոյն մէջ նոր զօրութիւն մը գտաւ։

—Ինչո՞ւ մեկնեցար, ըսաւ տրտմագին։

Բիէռ մտատանջութեամբ վեր առաւ ճակատը՝ զոր անձկութենէն խոնարհեցուցած էր։

—Քեզ արժանանալու համար, պատասխանեց նա պարզապէս։

—Ինձ արժանանալու պէտք չ'ունէիր, դու որ արդէն այնքա՛ն բարձր ես ուրիշներէն։ Նշանուած էինք, թող պահէիր զիս։

—Միթէ սիրտդ չէ՞ր կրող ինքզինքը պահել։

—Առա՞նց ներկայ եղող անձի մը օժանդակութեան, առա՞նց նեցուկի։

—Միմիայն այն օգնութեամբ, այն նեցուկով զոր ես ինքս ունէի. յոյս և յիշատակ։

Միշլին գունատեցաւ։ Բիէռի արտասանած մէն մի բառն աւելի եւս լիովին զգացունել կուտար իրեն իւր անարժան վարմունքը։ Ջանաց նոր պատճառանք մը ստեղծել ներողութիւն գտնելու համար։

— Բիէռ, դու քաջ գիտես, դեռ մանուկ մ'էի...

—Ո՛չ, յարեց երիտասարդը խեղդուկ ձայնիւ, կը տեսնեմ թէ արդէն իսկ կին մ'էիր, այսինքն տկար, փոփոխամիտ եւ անգութ էակ մը որ փոյթ չըներ բնաւ այն սէրը զոր կը ներշնչէ և ամեն ինչ կը զոհէ այն սիրոյն զոր կ'զգայ։

Ցորքան Բիէռ ինքզինքն արգահատելի ցոյց տուած էր, Միշլին ընկճեալ եւ անզօր զգացած էր զանձն. բայց այժմ երիտասարդը կ'ամբաստանէր։ Մէկ վայրկեանի մէջ մանկամարդ աղջիկը գտաւ իւր մըտաց արթնութիւնն եւ ապստամբեցաւ.

—Կարի ծանր խօսքեր են ատոնք, ըսաւ։

—Միթէ արժանաւոր չե՞ն, գոչեց Բիէռ այլ ևս չկարենալով ինքզինքը զսպել։ Կը տեսնես որ կը վերադառնամ, արտասուալից աչօք, եւ ո՛չ միայն գորովագութ խօսք մը չես գտներ ինձ ուղղելու, այլ եւ կ'ամբաստանես զիս թէ անտարբեր եմ։ Կը յանդիմանես զիս թէ մեկնեցայ։ Ուրեմն չի հասկցա՞ր թէ ի՛նչ պատճառներէ մղեալ էի։ Պիտի ամուսնանայի քեզ հետ. դու հարուստ էիր, ես աղքատ։ Այս անհաւասարութիւնը ջնջելու համար, որոշեցի անուն մը վաստկիլ։ Խնդրեցի գիտական այն վտանգալից պաշտօններէ մին որք անպատճառ մահ կամ համբաւ կուտան անոնց որք ինքզինքնին այդ պաշտօններուն կը նուիրեն, եւ հեռացայ։ Ա՛յս է ահա քու տրտունջդ։ Ա՛հ կը տարակուսի՞ս թէ առանց մորմոքման թողի զքեզ։ Ամբողջ տարի մը, գրեթէ մէն միայնակ, խոնջութենէ ընկճեալ, անդադար վտանգի մէջ, սա միակ մտածումը՝ թէ քեզ համար կը տառապէի՝ ամենայնի հանդուրժել կուտար ինձ։ Եւ երբ, անապատին անհունութեան մէջ կորուսեալ, կ'ըզգայի թէ թախիծ եւ լքում կը պաշարէին զիս, աչացս առջեւ կը բերէի զքեզ, եւ քու անոյշ դէմքդ յուսոյ հետ կը պարգեւէր ինձ իմ բոլոր զօրութիւնս։ Կ'ըսէի ինքնիրեն «Ինձ կ'սպասէ։ Օր մը պիտի գայ որ այսքան տառապանացս վարձը պիտի ստանամ...»։ Լա՛ւ ուրեմն, Միշլին, այդ օրն հասաւ։ Աւասիկ վերադարձայ եւ վարձատրութիւնս կը խնդրեմ։ Իմ ակնկալածիս նման է այն, այնպէս չէ՞։ Մինչդեռ ես փառաց ետեւէն կը վազէի, ուրիշ մը՝ աւելի գործնական եւ աւելի վարպետ, քու սիրտդ ինձմէ կը խլէր։ Եւ այսպէս կը կործանէ՛ իմ երջանկութիւնս։ Ա՛հ, շատ իրաւունք ունէիր զիս մոռնալու։ Այն յիմարն որ այդքան հեռի կ'երթայ իւր նշանածէն, արժանի չէ որ հաւատարիմ մնան իրեն։ Անտարբեր մ'է նա, սիրել չգիտեր։

Այս կորովի խօսքերը խորապէս յուզեցին զՄիշլին։ Առաջին անգամ լինելով իւր նշանածին հոգին երեւցաւ իրեն։ Ըմբռնեց թէ որքա՛ն կը սիրուէր և ցաւեցաւ որ աւելի կանուխ չ'էր գիտցած զայս կատարելապէս։ Եթէ Բիէռ ժամանակաւ խօսած լինէր այնպէս որպէս խօսած էր այժմ, ո՞վ գիտէ, գուցէ բարեփոխուած լինէին Միշլինի զգացմունք։ Անտարակոյս սիրած պիտի լինէր զնա։ Բնականէն տրամադիր էր արդէն։ Այլ Բիէռ յինքն պահած էր ծաղկատի աղջկան վրայ իւր ունեցած տարփանաց գաղտնիքը։ Զայն ձեռքէ հանելու գաղափարին ազդած երկիւղը միայն կարող եղած էր խլել իւր սրտէն այս բոցակէզ խոստովանութիւնները։

— Կը տեսնեմ թէ անիրաւ և անգութ եղած եմ քեզ նկատմամբ, ըսաւ Միշլին, կ'ըմբռնեմ թէ յանդիմանութիւններ ունենաս ինձ ուղղելու, բայց միակ յանցաւորն ես չեմ։ Դու զքեզ ալ ամբաստանելու ես։ Լռած խօսքերս տակնուվրայ ըրին զիս, կը վշտակրիմ քեզ այսքան ցաւ պատճառելուս, այլ շատ ուշ է, ես այլ եւս ինքզինքիս տէրը չեմ։

—Միթէ ասկից առաջ տէ՞ր էիր ինքզինքիդ։

—Ո՛չ, ճշմարիտ է, խօսք տուած էի քեզ, բայց վեհանձն եղիր։ Մի՛ չարաչար գործածեր այն իշխանութիւնը զոր կուտայ քեզ իմ խոստումս։ Այդ խոստումն, ետ կը խնդրեմ այժմ...

—Եւ եթէ մերժէի՞։ Եթէ ուզէի փորձ մ'ընել զքեզ վերստին ձեռք բերելու, գոչեց Բիէռ սաստկութեամբ։ Միթէ իրաւունք չունի՞մ ինքզինքս պաշտպանելու։ Եւ ի՞նչ գաղափար պիտի ունենայիր սիրոյս վրայ եթէ յօժարէի այսքան դիւրութեամբ կորսնցունել զքեզ։

Վայրկեան մը լռութիւն տիրեց. խօսակցութիւնն իւր ոգեւորութեան ամենէն բարձր կէտին հասած էր։ Միշլին հասկցաւ թէ իրեն անկ էր եզրակացութեան մը յանգիլ։ Ուստի արիաբար յարեց.

—Ինձ նման աղջիկ մը իւր խօսքը չի դրժեր։ Խօսքս քեզ տուած եմ, սակայն սիրտս ուրիշինն է։ Բառ մը ըսէ՛, և պատրաստ եմ, խօսքս բռնելու համար, քու կինդ լինիլ։ Որոշումը քու ձեռքդ է։

Բիէռ այնպիսի ակնարկ մը նետեց մանկամարդ աղջկան որ անոր հոգւոյն մինչեւ խորը թափանցեց։ Անդ կարդաց վեհանձնաբար չարժելու որոշումն, այլ տեսաւ միանգամայն թէ Միշլին չպիտի կարենար բնաւ մոռնալ այն անձն որ անդիմադրելի կերպիւ տիրած էր իւր սրտին։ Ուզեց գերագոյն փորձ մ'ընել.

—Մտիկ ըրէ՛, ըսաւ եռանդուն ձայնիւ մը, անհնար է որ այսքան շուտով վանած լինիս զիս սրտէդ։ Այնքա՛ն սիրած եմ զքեզ։ Յիշէ՛ մեր անցեալ աւուրց գորովը, Միշլի՛ն, յիշէ՛...

Այլ եւս չէր վիճաբաներ, կը պաղատէր. Միշլին յաղթական զգաց ինքզինքն։ Կարեկցութենէն յուզուեցաւ։

—Աւա՜ղ, հեզ Բիէռս, իմ գորովս պարզ բարեկամութիւն էր, սիրտս չփոխուեցաւ բնաւ քեզ համար։ Իսկ այն սէրը զոր ունիմ, կը տեսնես թէ տարբեր է։ Եթէ զիս գրաւած չլինէր այն, կրնայի քու կինդ լինիլ։ Եւ այնքա՛ն կը յարգեմ զքեզ որ երջանիկ ալ կը լինէի։ Բայց այժմ կ'ըզգամ տարբերութիւնը։ Դու, զոր ընդունած էի, գորովալից ընկեր մը միայն կըրնայիր լինիլ ինձ համար. Նա զոր ընտրած եմ, տէրս պիտի լինի։

Բիէռ, այս համարձակ և անգութ խոստովանութեան առջեւ, ճիչ մ'արձակեց.

—Ա՛հ, ինչպէս կը չարչարես զիս։

(Շարունակելի)

բանակին կազմակերպութեան ու ռազմական վարժութեան։

—Գ. ՆՈՊԼԷԻ վերջին ծանուցագրոյն թէեւ Գ. Քրիսփի չպիտի պատասխանէ, բայց Իտալիոյ Նախարարապետին թերթը՝ Ռիֆօրմա կը պատասխանէ երկար յօդուածով մը, ուր կը կարդանք սա նորալուր իրողութիւն թէ 1885 դեկտեմբերէն մինչեւ 1888 յուլիս Մասուայի իտալեան դատարանը դատեր է 314 դատեր, 278 անձանց վերաբերեալ, որոց մէջ կային ֆրանսական պաշտպանեալ 72 Յոյներ և ութ Հայեր և Սուրիացիներ, Նաեւ չորս ֆրանսական հպատակներ. Ֆրանսա չբողոքելով լռելեայն ընդուներ է Քափիթիւլասիոններու ջնջումն ի Մասուա։

* * *

Այս առտու Սուրհանդակաւ առնուած լրագրաց մէջ կը տեսնենք սա հեռագիր.

Վիեննա, 5 սեպտ. — Նաթալի Թագուհին ռումանական սահմանագլուխն հասնելուն, բազմաթիւ Սերպեր որք իրեն կը սպասէին, ընդ առաջ ելան, և յոյժ համակրալից ընդունելութիւն մ՚ըրին.

Թագուհին յուզուեցաւ, և շնորհակալութիւն յայտնելով, ըսաւ թէ կը յուսայ զիրենք վերստին տեսնել սիրեցեալ հայրենի երկրին մէջ, ուր ի մօտոյ վերադառնալ մտադիր է.

Ներկայից մին ի Գերմանիա Սերպիոյ գահաժառանգ իշխանին կողման ակնարկութիւն ընելով, Թագուհին պատասխանեց. «Հոն (ի Գերմանիա) լաւ ընդունելութիւն չգտանք. մեք չորս կին էինք, և մեր վրայ ղրկեցին 44 ոստիկաններ»։

Բոլոր ներկայք աղաղակեցին թէ ո՛չ մէկ Սերպ չպիտի մոռնայ Գերմանիոյ կողմէ Սերպիոյ եղած այս նախատինքն յանձին Սերպիոյ Թագուհւոյն և գահաժառանգին։

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Երէկ մայրաքաղաքիս բոլոր եկեղեցեաց մէջ հանդիսաւորապէս կարդացուեցաւ Ազգ. կեդր. Վարչութեան կրօն. Ժողովոյ շրջաբերականն ընդդէմ պապական կոնդակին. Ամենուրեք սովորականէն աւելի ազգայնոց խուռն բազմութիւն հաւաքուած էր և քարոզիչ Հարք ազդու քարոզներ խօսեցան։

Մայր եկեղեցւոյ մէջ, յաւարտ ընթերցման շրջաբերականին, բեմն ելաւ Եպիսկոպոսն և գողտրիկ քարոզ մը խօսեցաւ հազարի մօտ անձանց։

Ամեն. Խրիմեան Սրբազան քարոզեց Սկիւտարի Ս. Խաչ եկեղեցւոյն մէջ, իւր ծանօթ պերճ և հոգեզմայլ լեզուաւ։

Պէշիքթաշի եկեղեցին, ուր քարոզեց Գեր. Խորէն արքեպիսկոպոս Նարպէյ, ժողովուրդը խուռներամ դիմած էր ո՛չ միայն Պէշիքթաշէն, այլ շրջակայ ամեն գիւղերէն. Ներկայից մէջ կը նշմարուէին նաեւ բազմաթիւ Հայ հռոմէական ազգայինք որք յատկապէս եկած էին Բերայէն. Ն. Գերապատուութիւն խորին հմտութեամբ բացատրեց Հայ եկեղեցւոյ անկախութիւնն և պատուիրեց պահել Խղճի ազատութիւնն, այն գերագոյն բարիքն զոր ունի մարդ։

Նոյնպէս մասնաւորապէս յիշատակել արժան է Ղալաթիոյ Ս. Լուսաւորիչ եկեղեցին, ուր հազարաւոր պանդուխտ ազգայինք դիմած էին և Սամաթիոյ Ս. Գէորգ եկեղեցին ուր նոյնպէս հոծ էր բազմութիւնն, ինչպէս նաեւ Գատը գիւղի եկեղեցին։

* * *

Գեր. Գարեգին եպիսկոպոս Սըրուանձտեանց երէկ առաւօտ Բերայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյն մէջ հանդիսաւոր պատարագ մատոյց և Քըլի Ջանաղճը գիւղի համար քահանայ ձեռնադրեց նոյն գիւղացի Տէր Փիլիպպոսի որդի տիրացու Սարգիսն որ կոչեցաւ Տ. Մակար. Եկեղեցին լի էր յոգնախուռն բազմութեամբ։

Թէ՛ այս ձեռնադրութեան և թէ՛ շրջաբերականի ընթերցման առթիւ Ն. Գերապատուութիւն ընտիր քարոզ մը խօսեցաւ։

Երէկ, ի Պէշիքթաշ, յաւարտ եկեղեցական արարողութեանց, Մաքրուհեան վարժարանի սրահին մէջ սրտայոյզ հանդէս մը տեղի ունեցաւ ի յիշատակ վարժարանին հիմնադրին, հանգուցեալ Մաքրուհի տիկնոջ Պալեան, դուստր բարեյիշատակ Առաքել պէյի Տատեան. Հանդիսին կը նախագահէր Գեր. Խորէն Արքեպիսկոպոս. Ներկայ էին վարժարանին աշակերտք և աշակերտուհիք, և ստուար բազմութիւն ծնողաց. Աշակերտ մը և աշակերտուհի մը մէկ մէկ ատենաբանութիւն կարդացին. վարժարանին Նախկին աշակերտներէն Գ. Արշակ Չօպանեան եւս կարդաց ընտիր բանախօսութիւն մը օրուան հանդիսին վրայ։

Անցեալ օր մայրաքաղաքս հասան Վենետկոյ Մուրատ Ռափայէլեան վարժարանի այս տարուան շրջանաւարտ աշակերտաց դասը.

Գ. Գ. Անտոն Պէճիմեան	Պոլսեցի
Արսէն Էֆոեան	Կարնեցի
Գրիգոր Կիւլմէզեան	Պոլսեցի
Գրիգոր Գըլճեան	»
Լեւոն Կիւրեղեան	Տրապիզոնցի
Յակոբ Էմինեան	Պոլսեցի
Յովհաննէս Շէհրեան	»
Յովսէփ Միլդոնեան	Արտանուշցի
Վահան Մօզեան	Պոլսեցի
Վահէ Իսկէնտէրեան	»

Նոյնպէս երկու շաբաթ առաջ Պոլիս հասած է Գ. Գրիգոր Հալաճեան, որ Մուրատ-Ռափայէլեան վարժարանի մէջ իւր շրջանն աւարտելէ յետոյ, Բադուայի համալսարանին մէջ քիմիագէտ-դեղագործի վկայական ստացած է։

Թէլլուսի յոյն ընտանիքը կը խնդրէ մեզմէ հրապարակաւ իւր ջերմագին շնորհակալիքն յայտնել Գատը գիւղի հայ հասարակութեան, եկեղեցական դասուն և Թաղական Խորհրդոյն որք չորեքշաբթի առաւօտ Ս. Թադէոս եկեղեցւոյ հանդէպ պատահած հրդեհի պահուն մեծ ջանք և անձնուիրութիւն ցոյց տուին տարաբաղդ Գ. Տէմէդրիոս Թելլուսի ազատման համար, եւ անոր մահուանէն յետոյ ցաւակցութիւն և համակրանք յայտնած են սգակիր ծնողաց։

ԱԶԴ.— Նիկոմիդիոյ ազգ. վարժարանին համար ուսուցչուհի մը կ՚ուզուի որ գիտնայ հայերէն, աշխարհագրութիւն, Թուաբանութիւն ևայլն. Դիմել Աչէ-Էւէլի Խմբագրատունը։
2068 1—3

ԱԶԴ

Ս. Փրկչի Ազգային Հիւանդանոցի հաստատութեան համար Դեղագործի մը պէտք կայ։

Սոյն պաշտօնն ստանձնել ուզող ազգայինք կը հրաւիրուին գալ ի գրասենեակ Հոգաբարձութեան, կ. Պոլիս, Մեծ-Նոր-Խան, միջնայարկ, Թիւ 48. 49. 50, և հարկ եղած պայմանաց վրայ տեղեկութիւն ստանալ։

ՀՈԳԱԲԱՐՁ. ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑԻ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՍՏԻՃԱՆՔ ԵՒ ՊԱՏՈՒԱՆՇԱՆՔ

Սանիյէի երկրորդ աստիճան տրուեցաւ վերաքննիչ ատենի առեւտրական ճիւղին քարտուղարներէն Րէֆէթ պէյի։

Սալիսէի աստիճան՝ Դատական Նախարարութեան Թղթակցութեանց դիւանի քարտուղարներէն Նուրի պէյի, ժական առաջին ճիւղին առաջին քարտուղարի օգնական Սէլամի պէյի, Տրապիզոնի ոստիկանութեան պաշտօնեաներէն Մահմուտ Նամըգ էֆէնտիի և Երուսաղէմի երեւելիներէն ու Խոտաբէի ժողովոյ անդամ Իլիաս Նազոն էֆէնտիի որդւոյն Եուսուֆ Նազոն էֆէնտիի։

Երկրորդ կարգի Մէճիտիէ պատուանշան տրուեցաւ Փիլիպէի յունաց մետրապոլիտ Տ. Եուաքիմի։

Երրորդ կարգի Մէճիտիէ՝ Նասիլիցի յունաց մետրապոլիտ Տ. Աթանասիոսի։

Չորրորդ կարգի Մէճիտիէ՝ մաքսային վերատեսչութեան հաշուակալութեան դիւանի քարտուղարներէն Մէհմէտ Միւմթազ էֆէնտիի։

ՄՈՒՀԱՐՐԷՄԻ ՇՆՈՐՀԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ

Իսլամական 1306 Թուականի տարեգլխոյն առթիւ շաբաթ օրը բոլոր Նախարարք և կրօնական, քաղաքային ու զինուորական բարձրաստիճան պաշտօնատարք կայս. պալատ գնացին ի շնորհաւորութիւն։

Վեհ. Սուլթանին հրամանաւ երկրորդ սենեկապետ Հաճի Ալի պէյ ժամ 3 ½ին Եըլտըզի պալատան մեծ սրահն առաջնորդեց բոլոր Նախարարներն և անդ ծանոյց թէ իրենց շնորհաւորական բարեմաղթութիւնները գոհունակութիւն պատճառած էին Վեհ. Սուլթանին որ իւր կողմէն նոր տարի կը մաղթէր Նախարարաց և բարեմաղթութիւններ ընելով Իւր կայս. բարեւները կը ղրկէր. Հուսկ յետոյ, Հաճի Ալի պէյ զատ զատ Նախարարաց յանձնեց Վեհ. Սուլթանի Մուհարրէմիյէի դրամական նուէրներն։

Սենեկապետ պէյը նոյնպէս միւս բարձրաստիճան պաշտօնատարց հաղորդեց Վեհ. Սուլթանի կայս. բարեւները և յանձնեց Ն. Վեհափառութեան Մուհարրէմիյէի նուէրներն։

Վեհ. Սուլթանի մասնաւոր մեծարանաց արժանացան Նախորդ Խտիւ Իսմայիլ փաշա ու որդին, Նախորդ Մեծ Եպարքոս Սայիտ փաշա ու Նախկին Մեծ-Եպարքոս Քեամիլ փաշա, որոց Մուհարրէմիյէի նուէրներն յատուկ պահարաններու մէջ դրուած և կնքուած յանձնուեցան իրենց։

Նախկին Մեծ-Եպարքոս Խայրէտտին փաշա հիւանդ լինելով չկրցաւ ներկայ գտնուիլ։

Դեսպանատանց առաջին թարգմանք եւս շաբաթ օրը կայս. պալատ գնացին ի շնորհաւորութիւն և ընդունեցան արարողապետ Մունիր փաշայի կողմէ։

Եգիպտոսի Խտիւ Թէվֆիք փաշա, Մէքքէի Էմիր Աֆիւրրէֆիգ փաշա, Աճէմ Մուխթար փաշա, կուսակալք և օտար տէրութեանց քով գտնուող օսմանեան դեսպանք հեռագրաւ շնորհաւորած են իսլամական Նոր տարին։

ՀԱՄԻՏ ՊԷՅ

Վեհ. Սուլթանը Սանիյէ Միւթէմայիզ աստիճան շնորհած և Փարիզու օսմանեան դեսպանատան քարտուղար անուանած է Համիտ պէյն, որդի Ճէմիլ փաշայի և թոռ կայս. Թիկնապահ Նամըգ փաշայի։

ՏԱՐԵԴԱՐՁ ԿԱՅՍ. ԳԱՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ Ի ՓԱՐԻԶ

Փարիզի մեծ լրագիրք գովեստիւք կը նկարագրեն այն շքեղ լուսավառութիւնն որ տեղի ունեցեր է Լիւզինեան պալատին մէջ, որ ի Փարիզ, Վեհ. Սուլթանի գահակալութեան տարեդարձին օրն. Հրախաղութիւնք կատարուեր են, և քաղցրաւենիք ու օշարակք մատուցուեր են իշխանին եւ իշխանուհւոյն կողմէ բազմաթիւ հանդիսականաց, որոց մէջ մեծ մաս մը կը կազմեն եղեր անդամք հայ գաղթականութեան Փարիզի. Նոյն առթիւ իշխանն և իշխանուհին ընդարձակ հեռագիր մը ուղղեր են առ Վսեմ. Սիւրէյա փաշա, առաջին քարտուղար պալատան, խնդրելով որ մատուցանէ յոտս կայս. գահոյից իրենց բարեմաղթութիւններն և հաւատարիմ զգացմանց հաւաստիքը։

ԶԱՐՆ Ի ԿՈՎԿԱՍ

Ծանուցուեցաւ թէ Ռուսիոյ կայսեր ի Կովկաս ուղեւորութեան առթիւ կայս. կառավարութեան կողմէ բարձրաստիճան պաշտօնեայ մը պիտի ղրկուի յանուն Վեհ. Սուլթանի բարի գալուստ մաղթելու Աղեքսանդր Գ. կայսեր. Արդ, կ՚ըսուի թէ այս պաշտօն յանձնուած է կայս. Թիկնապահ Միւշիր Ֆուատ փաշայի։

ՎՍԵՄ. ԳԱԲՐԻԷԼ ԷՖԷՆՏԻ

Երէկի Թարիք կը ծանուցանէր թէ Բ. Դրան իրաւագէտ խորհրդական Նորատունկեան Վսեմ. Գաբրիէլ էֆէնտի ի մօտոյ Պերլին պիտի ղրկուի յատուկ պաշտօնով. Գաբրիէլ էֆէնտիի պաշտօնն է Պառոն տը Հիրշի և կայս. կառավարութեան միջեւ կեցած հաշուական ծանօթ խնդրոյն վրայ բերանացի կերպիւ պէտք եղած ծանօթութիւններն [illegible] Գ. Բաքէ, գերմանացի երեւելի օրէնսգէտն որ երրորդ իրաւարար կարգուած է այդ խնդրոյն մէջ։

* * *

Երէկ ի Բ. Դուռն հասած հեռագրոյ մը վրայ, որ կը ծանուցանէր թէ Գ. Բաքէ ծանրապէս հիւանդ է, յետաձգուեցաւ Վսեմ. Գաբրիէլ էֆէնտիի մեկնումն որ այս օրուան համար որոշուած էր։

Ի Բ. ԴՈՒՌՆ

Շաբաթ օրն ի Բ. Դուռն յանձնաժողով մը գումարուեցաւ ընդ նախագահութեամբ Բարձր. Մեծ—Եպարքոսին և զբաղեցաւ ասիական երկաթուղեաց խնդրով. Սոյն յանձնաժողովոյ անդամակցեցան Հասան Ֆէհմի փաշա, Րաիֆ փաշա, Ֆէրիտ Րիզա փաշա, Ֆէրիտ Նէճիպ փաշա և Մուզաֆֆէր փաշա։

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆՆ

Մայրաքաղաքիս ֆրանսական դեսպան Մոնդէպէլլօ կոմսն իւր կառավարութենէն եռամսեայ արձակուրդ ստացած լինելով երեք շաբաթէն պիտի մեկնի. Ի բացակայութեան Մոնդէպէլլօ կոմսին, դեսպանատան գործերը փոխանորդաբար պիտի վարէ խորհրդական Գ. Իմպէռ, որ այս պահուս արձակուրդով Բարիզ կը գտնուի և սեպտ. 19ին (Ն. Տ.) մայրաքաղաքս պիտի գայ։

ՓՈԽԱՌՈՒԹԻՒՆ

Ելմտական Նախարարութիւնը տասն հազար ոսկւոյ փոխառութիւն մը կնքեց Ղալաթիոյ այն վաճառականներէն որք Սպարապետի Դրան և Պատերազմական Նախարարութեան պիտոյքը կը հայթայթեն։

Թարիք կ՚իմանայ թէ 75,000 ոսկւոյ փոխառութիւն մ՚ալ Պանք տը Բօնիօն-Բէնիէ պիտի ընէ փոխարէն տուրք մը ցոյց տալով։

ԵՐԿԱԹՈՒՂԵԱՑ ՄԻԱՑՈՒՄՆ

Սոֆիայէն կը ծանուցանեն թէ պուլկարական երկաթուղեաց վարչութեան ընդհ. քարտուղար Գ. Սրաս Բոնդանդինովիչ Բէչգա ուղեւորեր է ուր իբր Պուլկարիոյ պատուիրակ ներկայ պիտի գտնուի երկաթուղեաց համաժողովին. Այս գումարման նպատակն է համաձայնութիւն մը գոյացնել ընդ մէջ Աւստրիոյ, Սերպիոյ, Պուլկարիոյ և Թուրքիոյ, պարզ ձեւի մը վերածելու համար ուղեւորաց երթեւեկութիւնն ինչպէս նաեւ ապրանաց փոխադրութիւնն միացման գծին վրայ. Ապրանաց փոխադրութեան սակագնոց խնդիրն յառաջիկային վերապահուած է։

ՍԿԻՒՊԻ ԳԱՒԱՌԸ

Երկաթուղեաց միացման առթիւ Նախարարաց Խորհուրդը Գոսովայի Նահանգին կեդրոն որոշած է Սկիւպի գաւառը. Նոյնպէս սորա կեդրոնն եւս ի Բրիշթինէ փոխադրած է. Նախարարաց Խորհրդոյ սոյն որոշումը Վեհ. Սուլթանին մատուցուած է ի վաւերացումն։

ՏԱՍԱՆՈՐԴԻ ՎԱՐՁԱԿԱԼՔ

Ելմտական Նախարարութիւնն հեռագրաւ հրահանգ ղրկեց ամեն կողմ թէ տասանորդի տրոց վարձակալներու և նոցա երաշխաւորաց կողմէ տրուած մուրհակներն առանց յապաղման պէտք է վաւերման նոտարներու կողմէ։

ԳԱՂԹԱԿԱՆՔ ՅԱՄԵՐԻԿԱ

Ինչպէս կը յիշուի Ներքին գործոց նախարարութիւնն հրահանգ ղրկած ի գաւառս արգիլելու համար Ասիոյ ժողովրդեան յԱմերիկա գաղթելն. Արդ Խարբերդի պաշտօնական թերթը, ծանուցանելէ յետոյ թէ նոյն տեղացիք ոմանք Պոլսոյ համար անցագիր առնլով աստ կը փոխեն զայն և կը չուին յԱմերիկա գաղթել, ձեռնհաս իշխանութեան ուշադրութիւնը կը հրաւիրէ։

ԺԱՄԱՆՈՒՄՆՔ ԵՒ ՄԵԿՆՈՒՄՆՔ

Նախընթաց օր և երէկ մայրաքաղաքս ժամանեցին Նաֆըզ փաշա՝ Սամսոնէն, Ատանայի հեռագրատան եւ Թղթատարատան տնօրէն Րաիֆ էֆէնտի, որ նոյն պաշտօնով Սամսոն պիտի փոխադրուի, Մէրսինէն, Հալէպի պատժական ատենին նախագահ Համիտ էֆէնտի՝ Հալէպէն, Այտընի պատժական ատենին նախագահ Մէհմէտ Շէքիպ էֆէնտի՝ Զմիւռնիայէն, Վեհ. Սուլթանի առաջին Եըպրըգտար Հասան պէյ՝ Պրուսայէն, Հանեայի զինուորական հիւանդանոցին առաջին բժիշկ հազարապետ Հիւսնի պէյ՝ Հանեայէն և 720 խլայ ուխտաւորք՝ Հիճազէն։

Նախընթաց օր և երէկ մայրաքաղաքէս մեկնեցան Գոսովայի վերաքննիչ ատենին ընդհանուր դատախազ Ճէլալ պէյ՝ յիւր պաշտօնատեղին, Հալէպի հեռագրատան և Թղթատարատան տնօրէն Մահմուտ Րաշիտ էֆէնտի՝ ի Հալէպ, Ելմտական Նախարարութեան հանրային պարտուց թղթակցութեան դիւանի քարտուղար Ալի պէյ՝ ի Զմիւռնիա, Զմիւռնիոյ հանրային պարտուց վարչութեան տնօրէն Իսմէթ պէյ՝ ի Զմիւռնիա, Տրէնէի գայմագամ Հաճի Ահմէտ Շէվգէ էֆէնտի՝ յիւր պաշտօնատեղին և Եգիպտացի սպայ Զօհրապ փաշա ի Պրուսա։

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

(Առեւտր. Լրագրէն քաղուած)

Ցորենի ժամանմանց յանկարծական դադարումն և հետեւաբար հրապարակի վրայ պատրաստի պակասութիւնը, եւրոպական սպառման համար տրամադրելի ցորենին այս տարի անբաւական լինելուն վերաբերեալ լուրերն, վերջապէս, բուսլլի գնոյն բարձրացումն, որ Օտեսայէն առնուած վերջին լրոց համեմատ այժմ անդ ոսկւով 9.65 լինելով բնականաբար կը բարձրացունէ Ռուսիայէն արմտիք արտածող վաճառականաց հաշուոց կարգադրութեան գներն. ասոնք են ահա տեղի ունեցած բարձրացման բուն պատճառներն և որք աւելի եւս պիտի բարձրացնեն արմտեաց և ալիւրի գները։

Շաբթուս մէջ հասան 50,000 քիլէ կակուղ ցորեն որք ամբողջովին սպառեցան հրապարակի վրայ, ինչպէս որ Նախորդ Եօթնեկին նման, շաբթուս վերջն ալ պատրաստ չկար բնաւ. Հետեւաբար կակուղ ցորենի գները քիլէ գլուխ մէկ ղրուշի բարձրացում մը ունեցան. Գալով ալիւրին, Ժամանմունք անբաւական են միշտ և սպառման չեն բաւեր. այսպէս, թէեւ 2000 պարկ ալիւր հասած էր, սակայն վաճառմունք 2500 պարկի հասան շաբթուս մէջ, որով պատրաստի քանակութիւնն իջաւ 1000 պարկի։

Օրտաձելի նիւթոց մէջէն, ափիոնի վրայ բաւական գործառնութիւններ եղան շաբթուս մէջ. 80 սնտուկ զանազան տեսակ ափիոն վաճառեցան, Պէյ-Բազարի օխան 125 ղրուշի, Գարահիսարինը 127½—128 ղրուշի, Պալըքէսիրը 140 և Եօզղատինը 165 ղրուշի։

Կապերտներէն վաճառեցան 315 հատ Գարապաղ Սէլտաձէսի՝ հատը 19 էն 20 ֆրանքի, 260 հատ Շիրվան՝ 16 էն 17 ֆրանքի, 250 հատ Գարապաղ՝ 28 էն 29 ֆրանքի, 70 հատ Սուլման՝ 70 ֆրանքի, 700 քառակուսի կանգուն Ֆէրագուն՝ կանգունը 15 էն 16 ֆրանքի, 300 հատ Տաղիստան, զանազան գներով եւ 300 հատ Ճիճիմ՝ հատը 13 ֆրանքի. Ասոնցմէ զատ կարեւոր վաճառումներ տեղի ունեցան նմանապէս պարսկական գորգերու վրայ. Բոլոր այս վաճառմունք կատարուեցան Աւստրիոյ և Ամերիկայի համար. 330 հակ թիֆթիկ վաճառեցան շաբթուս մէջ, Ֆասով, և Լոնտոնէն առնուած լուրերն անկարեւոր են միշտ. Բամպակեղէնաց մասին պատրաստի պակասութիւն կայ, գլխաւորաբար Վաթէր տեսակին։

Ոգելից ըմպելեաց հրապարակը բանուկ է ալքօլի և ռօմի վրայ բաւական գործեր կը լինին։

ԳՈՆԵԱ

Գոնեայի կուսակալութեան կողմէ Ներքին գործոց Նախարարութեան ուղղեալ հեռագիր մը կը ծանուցանէ թէ Նահանգին Էրէյլի գաւառակին մէջ երեւան եկած անասնոց հիւանդութիւնը բոլորովին անհետացեր է։

ՀԱՅՐԱՍՊԱՆ ՄԸ

Այս աւուր Սաատէթի մէջ հրատարակեալ թղթակցութիւն մը կը պատմէ հետեւեալ սոսկալի ոճիրն որ տեղի ունեցած է Մաղնիսայի Սալանկու գաւառակին շրջակայ Բոյրազ գիւղի մէջ։

Նոյն գիւղացի Ալի անուն բաւական հարուստ մարդ մը իւր կնոջ հետ գժտութիւն մ՚ունենալով կինը տունը կը թողու և ուրիշ տեղ կը բնակի 7-8 ամսոյ չափ. Ալի իւր կինը կը հրաւիրէ իրեն հետ հաշտուիլ յայտարարելով թէ հակառակ պարագային մէջ վերստին պիտի ամուսնանայ. Ալիի որդին Հասան կ՚իմանայ անոր մտադրութիւնը և նկատելով որ եթէ իւր հօր կրկնամուսնութենէն զաւակ մը ծնի իւր ժառանգութեան մասնակից պիտի լինի, կ՚որոշէ սպաննել իւր հայրն միայնակ վայելելու համար ժառանգութիւնը. Հասան նոյն գիւղացի Մուսա անուն մարդու մը 250 մէճիտ կը խոստանայ իւր հօր սպանութեան գործը դիւրացնելու համար և անոր հետ ոճրին գործադրութեան համար յարմար օր մը կ՚որոշեն. Րամազան պայրամի հինգերորդ օրն հայրը՝ Ալի, որդւոյն կ՚ըսէ թէ գործի մը համար մօտակայ գիւղ մը պիտի երթայ. Հասան իւր ընկերոջ իմաց կուտայ և իւր հօր անցնելիք ճամբուն վրայ կը պահուըտի. իսկ Մուսա աւելի հեռուն կը կենայ. Հայրը նոյն տեղէն ձիով անցած պահուն Մուսա իւր հրացանը կը պարպէ և Ալի ձիէն վար կիյնայ մահամերձ վիճակի մէջ. Հասան նոյն պահուն երեւան ելնելով ձիուն սանձով կը խեղդէ իւր հայրն որ արդէն վերջին շունչը կ՚աւանդէր և դիակը քարի մը տակ կը պահէ. Մէկ քանի օր յետոյ հովիւ մը դիակը տեսնելով ոստիկանութեան իմաց կուտայ. Յետ երկար քննութեանց հայրասպան որդին և իւր ընկերը կը ձերբակալուին և հարցաքննութեան ենթարկուելով կը խոստովանին ամեն ինչ. Այս դէպքին առթիւ նոյնպէս ձերբակալուած է Հիւսնի էֆէնտի անուն ոստիկան մը որ քննութեան համար թէեւ ոճրին վայրը ղրկուած, սակայն 508 մէճիտ կաշառք առնելով խնդիրը ծածկել ջանացած էր։

Ընդհանուր վիճակագրութեան յանձնաժողովն ընդարձակ Սալնամէ մը կը պատրաստէ 1306 թուականին համար։

—Ռուսական Ս. Բետերսպուրկ շոգենաւն, յորում կը գտնուէին 240 ռուս գաղթականք, երէկ Օտեսայէն մայրաքաղաքս ժամանեց և պահ մը աստ մնալէ յետոյ իւր ճամբան շարունակեց դէպ ի Վլատիվոսդոգ։

—Ուրբաթ օրն Աղէօս Նիգօլա անուն օսմանեան առագաստանաւ մը Մարմարայի մէջ փոթորկի բռնուելով ընկղմեցաւ և նաւաստիներէն երկու հոգի խեղդուեցան։

—Սելանիկի ջուրց մենաշնորհի գործը բաւական յաջող հանգրուանի մէջ է, կ՚ըսուի. Լոնտոնի մէջ յատուկ ներկայացուցիչ մը կ՚աշխատի դրամատէրց խումբ մը կազմել այդ մենաշնորհն ստանձնելու համար, եւ միւս կողմէ Կ. Պոլսոյ մէջ պէտք եղած գործողութիւնները կը կատարեն Գ. Բիոս և Պառոն տը Վանտէօվր։

—Արքունի վառօդարանի տնօրէն Սապիդ փաշա շաբաթ օրը մեկնեցաւ մայրաքաղաքէս ի Գերմանիա, Քրուփի զինագործարանէն ստանալու համար այն խոշոր թնդանօթներն որք յանձնարարուած են կայս. կառավարութեան կողմէ։

—Ոստիկանութիւնը Բրինքիբօ բնակող յոյն կին մը ձերբակալած է. Այս կին իւր աղջիկն իրեն դրամագլուխ ըրած՝ խել մը պարզամիտ երիտասարդներ կը խաբէր զանոնք իւր աղջկան հետ նշանելով և ստակնին կորզելով։

—Անցեալ օր ի Պոլիս Ֆտթինց Թաղը մէկ քանի ամբոխավաճառներու միջեւ առեւտրոյ պատճառաւ կռիւ մը ծագեցաւ և հինգ վեց հոգի վիրաւորուեցան. Ոստիկանութիւնը վրայ հասնելով կռիւն հանդարտեցուց և վիրաւորողները ձերբակալեց. Վիրաւորեալք հիւանդանոց փոխադրուեցան։

—Պօղճա կղզւոյ բերդին մէջ շինուած ամրութիւնք աւարտած լինելով երեք հատ խոշոր թնդանօթներ դրուեր են անդ։

—Երկու օր առաջ Եէնի Ճամիի հրապարակէն անցնող սարքջաւ կառք մը Էմիրկէնի Թուրք վարժարանի դռնապանը տապալեց. Դռնապանը վիրաւորուած լինելով կառավարը ձերբակալուեցաւ։

—Ոստիկանութիւնը ձերբակալած է ի Բերա անգլիական դեսպանատան դէմ գտնուած գարեջրատան տէրն որ քանի մը շուներ թունաւորած էր։

ՎԱՐԺԱՐԱՆ
ՄԽԻԹԱՐԵԱՆՑ ՎԵՆԵՏԿՈՅ
Ի ՔԱՂԿԵԴՈՆ

Պիտի բացուի ուսումնարանս Սեպտեմբեր 1ին, յորում կը սկսի իւր տարեկան ուսմանց շրջանը։

4—6 2035 ՏԵՍՉՈՒԹԻՒՆ

ՀԵՌԱԳՐԱԼՈՒՐՔ

ԱԺԱՆՍ ՀԱՎԱՍ

Բարիզ, 8 սեպտեմբեր

Զանզիպարէն առ Թան ուղղեալ հեռագրի մը նայելով, ի Բանկանի (արեւելեան եզերք Ափրիկէի) կռիւ մը ծագեր է Գերմանացւոց և բնիկներուն միջեւ։

Մեքսիկայէ հեռագիր մը կը ծանուցանէ թէ երկրաշարժի սաստիկ ցնցում մը զգացուեր է սեպտեմբեր 6 ին ի Մեքսիկօ։

Աթէնք, 8 սեպտեմբեր

Կառավարութիւնն երեք աւուր հասարակաց սուգ հրամայեց Գ. Լոմպարտոսի համար. Հանգուցելոյն ընտանիքն ցաւակցական բազմաթիւ ուղերձներ ստացաւ։

Իտալական քանի մը ծովամարտակիրք հասան այսօր ի Պիրէոն. Նաւատորմին միացեալ մասը կ՚սպասուի։

Յունական այն ամեն նաւահանգիստներուն մէջ, ուր ներկայացաւ իտալական նաւատորմը, սառն ընդունելութիւն մը գտաւ։

Պետրսպուրկ, 9 սեպտ.

Ռուսիոյ կայսրն և կայսրուհին Ելիզապէթփօլ հասան, ուր ցնծութեան ցոյցերով ընդունուեցան։

Մոսքովսքիյա Վետոմոսթի կ՚ըսէ թէ Բէդերհօֆի տեսակցութեան մէջ բնաւ համաձայնութիւն մը չէ գոյացեր ո՛չ մէկ խնդրոյ վրայ։

ԴՐԱՄԱԿԱՆ

ՂԱԼԱԹԻՈՅ ՊՕՐՍԱ

Ղալաթիա, 29 օգոստոս

Օսմանեան Քօնսօլիտէ

		Դահեկան
Երէկ երեկոյ գոց. (Միաց. Ս. Սէրի		16 21
Զօրայքին դոցուելէն վերջը	»	16 21
Բերայի մէջ	»	— —
Առաւօտուն բացուեցաւ	»	16 26
Բարձրագոյն գին	»	16 27
Նուազագոյն »	»	16 26
Կէս օրին	»	16 27

ԻՍԹԻԳՐԱԶԸ ՏԱԽԻԼԻ

Երէկ երեկոյ	38 15
Այս առաւօտ	38 15
Կէս օր	38 15

ԸՆԹԱՑԻԿ ԱՐԺԷԹՂԹՈՑ

փոխառութիւն 1858)	Ա	Սէրի	25
» 1862)			
» 1860)			
» 1863)	Բ	»	15 10
» 1872)			
» 1865)			
» 1869)	Գ.	»	16 26
» 1873)			

ԲԱՆՔՆԵՏՈՆՔ

Սօսիէթէ ժէնէրալ	Անգլ. Լր.		4 10
Քրէտի ժէնէրալ	Օսմ.	»	7 31
Բանք տը [illegible]	»	»	6 22
փօռ. Շիմէ է վըլէօր	»	»	4 20
Թրամուէյ	»	»	477 ½
Ռումէլի երկաթուղի	Ֆր.		42 25
Օպլիկասիօն տը Բրիօրիթէ	»		— —
Բաժնեթուղթ Լաւրիոնի	»		116

Ընթացք դրամոց

Օսմանեան ոսկի	ղրշ.	100
20 ֆրանքնոց	»	88 1
Անգլիական ոսկի	»	110 36
Բօլ Իմբէրիալ	»	91 12
Զըրիմց	»	51 25
Ռուբլի թղթադրամ	»	8 88
» արծաթ	»	75 20
Ֆիօրին	»	— —
Մէճ. արծ. (տարբ.)	»	108 11
Վեցնոց	»	103 30
Հինգնոց	»	104
Մէթալիք	»	104
Թասֆիյէ	»	13

ԵՒՐՈՊԱԿԱՆ ՊՕՐՍԱ

Լոնտոն, 8 Սեպտեմբեր ժամ 5 վայր. 15 երեկոյ

Անգլ. քօնսօլիտէ	98 ⅝
Օսմ. » Սէրի Դ. բացուեցաւ	15 ⅛
» » » գոցուեցաւ	15 ⅛
» » » Ա.	24 ¾
» » » Բ.	15 ⅜
» » » Գ.	14 ⅞
Օթօման 1871	87
Փոխառութիւն 1877	97 ⅞
Պանք Օթօման	11 ½
Ռուսական փոխառ. 1873	98 ½
Եգիպտական Միացեալ (Յունիֆիէ)	85 ⅝
» առանձն. (բրիվիլէճիէ)	103 ⅛
Տայրա Սանիէ	80 ⅜
Դօմէնիալ (փոխառ. Րօչիլտ)	101 ¾
Հունգարական պարտաթղթ 4%	— —
Փոխանակութիւն Բարիզի վրայ	— —

Վիեննա, 8 Սեպտեմբեր ժամ 4 երեկոյ

Պօրսան գոց է տօնի պատճառաւ։

Բարիզ, 8 Սեպտեմբեր ժամ 3 վայր. 45 երեկոյ

Ֆրանսական Ռանթ 4 ½%	106 05
» » 3%	84 47 ½
Օսմանեան քօնսօլիտէ Սէրի Դ. բացուեցաւ	15 27 ½
» » գոցուեցաւ	15 42 ½
» » » Բ.	15 75
» » » Գ.	15 42 ½
Օսմանեան երկաթուղի	42 62 ½
» Րէժիի բաժնեթուղթք	— —
Պանք Օթօման	546 25
Գրէտի Լիոնէ	632 50
» Ֆօնսիէ	1376 15
Բամնեաուի Լիոնի	1310
Սուէզի ջրանցք	2245
Ռուսական 5% 1877 ի	102 ½
Իտալական Ռանթ	98 12 ½
Սպանիական (արտաքին)	75 ½
Եգիպտական Միացեալ	433 75
Բրիօրիթէ Թիւրք	425
Հելլենական 5%	494 37 ½
Չէք Լոնտրայի վրայ	25 42

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ
ԹՈՒԱԲԱՆՈՒԹԻՒՆ
Ի պէտս երկրորդական վարժարանաց
ԳՐԵՑ
Յ. Ն. ՓՈՑԱՃԵԱՆ

Սոյն դասագիրքն որ կ՚աւանդուի կեդրոնական վարժարանաց մէջ թէ բարձրագոյն նախակրթարանաց համար և թէ երկրորդական վարժարանաց համար մեծ պէտք մը կը լրացնէ իբր միակ դասագիրք տեսական և գործնական Թուաբանութեան. Կեդրոնատեղիներն են Զարդարեան գրատունն ի Սուլթան համամ և Պիպեռճեան գրատունը Պապը Ալի ճատտեսի Թիւ 12.

2069 1—8

ՈՒՐԱՆԱՆՔ

«Որ ի վերայ ամպոյն որոտայր, նկուն եղեալ քան զամօրական բնութիւնն ի վայր գտաւ, ընդ մեզ խօսելովն։

«Որ իբրեւ զհանդերձ կարծէր ուրանել մեզ զքրիստոնէութիւն (Հայրենի Եկեղեցւոյն մերոյ), արդ իբրեւ զգոյն ի մարմնոյ չկարէ շրջել, և ոչ այլ կարասցէ մինչեւ ի կատարած»։

Բան Ս. Վարդանայ։

ԵՂԻՇԷ

Հռովմայ եկեղեցւոյն Հայրապետ Լեւոն երեքտասաներորդ Ս. Պապն կոնդակ մը գրած է Կաթոլիկ Հայոց Պատրիարք Գերապայծառ Ազարեանին. և Գերապայծառն զայն կոնդակ թարգմանելով ու տպել տալով ցրուած է Հայոցս մէջ. Հռովմայ Հայրապետն իւր ուրախութիւնը յայտնած է Կաթոլիկաց բաժանեալ Հասունեանց և Հակահասունեանց միութեան վրայ, և մի միայն անոնց Պատրիարքին, Հոգեւորականաց և աշխարհականաց ուղղած է կոնդակը, ինչպէս որ պատշաճ է, զի Հռովմայ եկեղեցին ի հաղորդութեան չէ Հայաստանեայց եկեղեցւոյ հետ, և Հայաստանեայց եկեղեցին անկէ ոչ կոնդակ կ'ընդունի, ոչ հրահանգ, և ոչ անոր իրաւասութիւնը իւր վրայ կընդունի. Հայ ազգն ունի իւր կաթողիկոսն, որ է յաջորդ Որբազան Առաքելոց Թադէոսի և Բարթուղիմէոսի և սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչին. և է Եպիսկոպոսապետ և պատուական Հայրապետ ամենայն Հայոց։

Գերապայծառ Ազարեան գիտնալով զայս՝ ինչո՞ւ ուրեմն այդ կոնդակը կը բաժնէ Հայոց, կը ղրկէ դաւաններըը. Անոր համար որ յորդոր գրուած է անոր մէջ որպէս զի կաթոլիկ եկեղեցականներ վառեալ ի նախանձ ջան ի գործ դնեն Հայերը Կաթոլիկ ընելու. Պատուէր եղած է անոնց, որ մեզի ըսեն. Թէ Ս. Լուսաւորիչն Հռովմայ Սեղբեստրոս Հայրապետէն առած է իւր կաթողիկոսութեան իշխանութիւնն. Թէ՝ Ինքն և Սրբոյն յաջորդները ընդհպատակութեամբ Հռովմայ Պապին եղած են. Ըսեն մեզ թէ՝ Ս. Պապն Հայոցս վրայ արգահատելով մեր հոգիները կորուսելէ պիտի փրկէ, և թէ՝ բարօրութիւն և սրտի ցանկալի բարիքները աշխարհիս վրայ մեզ պիտի ընծայէ, եթէ միանանք Հռովմայ եկեղեցւոյն հետ, լինինք կաթոլիկ։

Մեք այնքան վստահ ենք մեր եկեղեցական հարց և եղբարց, և համայն դասու ժողովրդեան վրայ, որ կը կարծենք թէ կարեւորութիւն անգամ չընծայեն այդ թղթոյն. Հայաստանեայց եկեղեցւոյ մանուկն անգամ գիտէ այսօր թէ՝ Հռովմայ Պապերն Քրիստոսի հեզութեան հակառակ՝ ի՞նչ բռնաւորներ եղած են. և պապականութիւնը՝ Քրիստոնէութեան շինարար հոգւոյն հակառակ՝ ի՞նչ աւերներ ըրած է. Նոյն իսկ Հռովմէական հօտին ցրուելուն պատճառ լինելով, զի կը վառէին անոնց մարմինը բոցերու մէջ. և առաջնորդելով անոնց հոգիները գեհենին մէջ. Իրենք իսկ եղան իրենց աթոռոյն բեկման և անկման պատճառ. և այսօրուան Պապն յայլուստ զօրաւիգ և ապաւէն կ'որոնէ իւր փրկութեան և բարօրութեան համար. բարօրութիւն՝ զոր ինքն չունի, և մեզ կը խոստանայ։

Մեր փոքր մանուկներն անգամ գիտեն թէ՝ մեր Ս. Լուսաւորիչն Թադէոս Առաքելոյ յաջորդութենէն իջած կեսարիոյ Ս. Ղեւոնդ Հայրապետէն ձեռնադրուեցաւ Հայրապետ ի վերայ եկեղեցւոյն Հայաստանեայց. ուրեմն Հռոմէն կամ Ս. Սեղբեստրոսէն ոչ ձեռնադրութիւն և ոչ իշխանութիւն առնելու պէտք ունէր. Թէ՝ Ս. Լուսաւորչի յաջորդներն ոչ Հռովմայ հպատակութիւն ունեցեր են և ոչ ալ Հռովմէն բարիք մը տեսեր են. Այդ ամենայն հին հնարքներ են, որ կը կրկնուին, որպէս զի միամիտները պատրեն, և որսան Ս. Լուսաւորչի գաւիթէն ի գաւիթն Հռովմայ։

Կա՞ն արդեօք այդպիսի միամիտներ որ չգիտնան Պապերուն և պապականութեան երեսէն մեր ազգին հասած կորուստներ և վնասներն. Ո՞չ ապաքէն նոյն իսկ մեր աչքով տեսնելու դժբաղդութիւնն ունինք թէ ո՛րպիսի խարդաւանօք երկպառակութիւն կը սերմանուի հայ ժողովրդեան մէջ, հայերը բաժնելու իրենց եկեղեցւոյ գրկէն, ձեռամբ նոյն իսկ բաժանեալ մաս մը հայոց եկեղեցականաց, որ հայ են և զիրենք կաթոլիկ կ'անուանեն։

Ի սրտէ կը ցաւինք կաթոլիկ հայոց վրայ, որք են ոսկր յոսկերաց, և մարմին ի մարմնոյ Հայոց. և սակայն կըտրուած, և Հռովմայ ձեռքն դանակ եղած են խոցոտելու և կտրտելու համար բուն մարմինն և արմատը։

Այսպէս եղած են միշտ Պապերու երեսէն Հայոց ազգին կրած քաղաքական և բարոյական մեծագոյն չարիք և կորուստներն. Ահա Կիլիկիոյ պատմութիւն. Ահա Ունիթօռներն, որ հայ պապական լինելով, գործիք չարեաց եղան Պապին ձեռքը, և չարախօսեցին և չարչարեցին ազգն. Ահա Լեհաստանի քառասուն հազար տունէն աւելի ընտիր հայերն, որք՝ իր եկեղեցին ուրացող և Պապին գիրկը դիմող Նիկոլ հայ եպիսկոպոսին անխղճօրէն լըբութեամբ՝ կաթոլիկ եղան և կորեան. որոց կը խոստանար ժամանա՛կին պապութիւն՝ պահելու Ազգային ծէսն, լեզուն, աւանդութիւն, եւն. և սակայն անմիջապէս անհետացաւ այն ամենայն,

Յիշե՞նք ժամանակակից պատմութենէն. Յիշե՞նք դեռ կէս դար առաջ եղածները. Յիշե՞նք, բայց ո՞ր մէկն. և ինչո՞ւ անցելոյն վրայ խօսինք. ո՞չ ապաքէն երէկուան գործ է Հասունեանի հասուցած հարուածն. և այսօրուայ գործ՝ Ազարեան Գերապայծառի հնարածն։

Այդ կոնդակը կ'ըսէ, Հռովմայ Պապերէն ոմանք մտածեր են բարիք ընել Հայոց, կամեցեր և հոգացեր են Հռովմայ մէջ վարժարան բանալ Հայոց համար. կը հոգան եղեր որ հայ (կաթոլիկ) եպիսկոպոս մը ի Հռովմ նստի ձեռնադրելու և ուսուցանելու համար եւն. Այս հնարքները բարի՞ք են Հայոց, թէ դուք և որոգայթ որսողին։

Մեք զգոյշ ենք. և զգոյշ մնանք մանաւանդ այն խոստումներէն, որոց հաւատացողն պէտք է լինի դաւաճան և ուրացող իւր հայրենի մայր եկեղեցւոյն, յորմէ ծնաւ ի Քրիստոս. Այո, պէտք է լինի դաւաճան և անհաւատարիմ։

Քանզի երբ կ'ըսէ, Եկէք կաթոլիկ եղէք, որ ձեր հոգին փրկուի. ըսել կ'ուզէ թէ՝ Հայոց եկեղեցւոյ մէջ փրկութիւն չկայ։

Անշուշտ այսպէս պիտի խոստովանի կաթոլիկ եղող մը։

Ահա ուրացումն։

Եւ, երբ կ'ըսէ Պապն, կաթոլիկ եղէք, եկէք ինծի, և ես տամ ձեզ բարօրութիւն և զամենայն ցանկալի բարութիւն աշխարհիս. (ճիշդ որպէս կ'ըսէր փորձիչն առ Քրիստոս. Եթէ անկեալ երկիրպագանիցես ինձ, քեզ տաց...) ըսել կ'ուզէ թէ դուք զրկեալ էք բարօրութենէ և աշխարհի բարիքներէ, զորս խլեր է ձեզմէ և յոյս չկայ այլ եւս որ տայ ձեզ ձեր տիրող Թագաւորութիւնն։

Կ'զգա՞ք այս խօսքիս վտանգը. փորձութեանց մեծագոյնն, ո՜ հաւատարիմ Հայոց ազգ. Աստուած պահէ զմեզ. Բայց մեր նախնիք և մեք գոհ ենք մեր տիրող Օսմանեան կայսրութենէն. Եւ նախ յԱստուծոյ ապա նոյն տէրութենէն եւեթ կ'ակնկալենք մեր բարիք. Հռովմ չենք ճանչեր, չե՛նք։

Ցանուցէ քո, Ս. Պապ, Կաթոլիկ հայ գերապայծառները մեր բարօրութիւնը կը խռովեն. մանաւանդ դաւանութեան մէջ ինչե՞ր կ'ընեն. և դուք անոնց ձեռքով բարօրութի՞ւն կը խոստանաք մեզ. Եթէ կը խոստանայք «Հայ ծէսն և լեզուն, իւր հնութեամբ, գեղեցկութեամբ և մեծահռչակ մատենագրաց թուով փայլեալ, պարտ ու պատշաճ պատուով պահել», ինչո՞ւ ուրեմն արդէն վերցուցեր էք Կաթոլիկ Հայոց ժամագրքէն Ս. Աստուածի «Որ խաչեցարն»։

Ինչո՞ւ Ս. Պատարագին, աղօթից և քարոզից մէջէն վերցուցեր էք «Եպիսկոպոսապետին մերոյ և պատուական Հայրապետին ամենայն Հայոց Կաթողիկոսի» յիշատակութիւնն. և Հռովմայ Քահանայապետի անունը փոխանակ դրեր։

Ինչո՞ւ մեր «Հաւատամք»ը այլայլեր էք. և «Առաւօտ լուսոյ» Շնորհալւոյ երգին մէջ, և ուր որ կայ «Բղխումն ի Հօրէ», աւելցուցեր էք և «յՈրդւոյ»։

Ինչո՞ւ Ս. Պատարագի անապակ բաժակին մէջը ջուր խառներ էք, եւն. եւն.

Դարձեալ ի Քաղկեդոնականութի՞ւն կը քաշէք Հայոց եկեղեցին, որոյ բռնութեան և հնարից դէմ տասն եւ չորս դարէ ի վեր տոգորելով Հայ ազգն կրցեր է ապրեցնել ինքզինքն. այժմ նոյն ճանապարհի վրայ հրաւիրելով զհայս, փոխելու և ոչնչացնելո՞ւ կը հրաւիրէք զմեզ ինչ որ Ազգային է, և ընկղմելու Հայկական մեծ և աննման եկեղեցին Լատինականութեան անյատակ անդունդը, ուր ինկածներն անհետ կը լինին և յիշատակն յերկրէ կը ջնջուի։

Հռովմայ Ս. Քահանայապետն, եթէ Աստուած միայն իրեն հետ է, ինչո՞ւ չհոգայ եւրոպական մեծամեծ ազգերը վերադարձնել իւր հայրական գիրկը, անոնք, որ ընկեցին պապականութեան լծոյն ծանրութիւնը, խորտակեցին դուռն և ելան արտաքոյ գաւթին Հռովմայ, իրենց հոգւոյ փրկութիւն և աշխարհային բարօրութիւն ձեռք բերելու համար. Զմեզ ինչո՞ւ կը կոչէ. Արդեօք անոնց համար կռեալ փականքն ու կապանքն, որ անգործ ձգուած են, մե՞ր վրայ փորձել կ'ուզէ, տանջելո՞ւ մեր հոգին և մեր խիղճը, մեր մարմին և մեր միտքը։

Մեր հոգւոյ փրկութիւնն ապահովեալ է ի ձեռն Ս. Առաքելոց Թադէոսի և Բարթուղիմէոսի, որք բերին ի հայս զՍուրբ Հոգին զոր ետ Տէր Առաքելոց, ասելով «Առէք Հոգի Սուրբ, զոր միանգամ կապիցէք յերկրի՝ եղիցի կապեալ յերկինս. և զոր արձակիցէք յերկրի՝ եղիցի արձակեալ յերկինս»։

Հայաստանեայց եկեղեցին փրկեալ է արդեամբ խաչին Փրկչին մերոյ. և սիրով և յուսով և հաւատով լի պայծառապէս ցոյց տուած է, թէ ինքն գտած է արքայութեան ճանապարհ վաղագոյն իսկ քան զՀռովմ։

Այո, երբ Եդեսիոյ մէջ Աբգարն և բիւրաւոր հոգիք հաւատով Ս. Աւետարանի քարոզութեան կը լուսաւորուէին, երբ առաջին աւազան մկրտութեան ի Հեթանոսս կը կանգնէր յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ. երբ ճշմարտին Աստուծոյ անուան երկրպագութեան և փառաբանութեան տաճար կը կառուցուէր. երբ Ազգէն՝ եպիսկոպոս, և այլք ի քահանայս և պաշտօնեայս եկեղեցւոյ Քրիստոսի կը կարգէին ի հայս, Հռովմն ո՞ւր էր, և ի՞նչ Աստուած կը պաշտէր. Երբ ի վերայ վիմին Քրիստոսի հիմնեալ եկեղեցին Հայաստանեայց, մարմնով և արեամբ կ'ինային վէմ կրկին, Թադէոսն և Բարդուղիմէոսն, և իրենց հետ քարինք սուրբք, հազարաւորք ի հաւատացելոց հայոց, և հարսնացեալք փեսային երկնաւորի, օրիորդք սրբասնեալք, արքայազունք, Սանդուխտն և Ոգուհին, կը վայելչացնէին, կ'ամրապընդէին զշինուած և զլուր նորին իրենց չինաղ մարտիրոսութեամբ, և հալածանաց տակ կ'այրէր ու կը պահպանուէր այս եկեղեցին, մինչեւ յարոյց Աստուած զմեծ Նահատակն, զՍուրբ Լուսաւորիչն. որ իւր անձին չարչարանօք, սրբութեամբ, աղօթիւք և պահօք և չորեքտասան ամ ի խոր վիրապի տանջեալ, երկնեց և ծնաւ ազգ մի ողջոյն. լուսաւորեց զբովանդակ հայ աշխարհ լուսով Սուրբ Աւետարանին, զնիրաւն արար Յորդանան. Սուրբ Հոգին երեւեցոյց, զՄիածին որդին Աստուած յերկնից ի Վաղարշապատ իջոյց, և զՀայրն Աստուած ամենեցուն ծանօթացոյց. լեռներն ու ձորերը լցոյց Աստուծոյ տաճարներով. Երկնից դուռն փրկութեան ամենեցուն բացաւ. այնուհետեւ իբրեւ զաղանիս երամովին ձագախառն թռուցեալ անթիւ հոգիք առաքինեաց, վկայից, սրբոց, ճգնաւորաց, կուսանաց և ամենայն դասու հաւատացելոց ընծայեց յերկինս։

Այս ամեն շնորհք շնորհած է Աստուած Հայաստանեայց եկեղեցւոյն առանց շնորհաց Հռովմայ։

Աղէկ որ Ս. Մեսրոպ հայկական գրեր յօրինելու համար չդիմեց Հռովմայ։

Աղէկ որ Ս. Սահակ հին և Նոր Կտակարանի թարգմանութեանց համար օգնութիւն կամ մասնակցութիւն չխնդրեց Հռովմէն. և մեր եկեղեցին զարդարելու և Աստուածային իմաստութեան երգն ու հոգին լսելի ընելու համար, ժամակարգութիւն և կանոն հաստատելու համար Հայաստանեայց եկեղեցւոյ հարազատ և հոգեւանդ որդւոց հետ գործակցեցաւ, որք և էին որդիք իւր երկանց, սուրբ վարդապետք, Թարգմանիչք։

Քրիստոնէութիւնը մեծագոյն վըտանգէ ազատելու համար՝ Հայոց աշխարհ ամբողջովին ախոյան կանգնեցաւ ընդդէմ գոռ զօրութեան բռնաւորին արեւելեան արքային. ոչ այն միլիոնաւոր նահատակելոց մէջ, ոչ կապեալ նախարարաց մէջ, ոչ այնքան տառապելոց և գերելոց մէջ, ոչ երբէք, եւ ոչ ուրեք չկար Հռովմայ եկեղեցիէն կամ քահանայապետէն նուիրակ, օգնական, մխիթարիչ, կարեկից մէկը. և ոչ կոնդակ կամ թուղթ ողջունի։

Այլ Հայոց Կաթողիկոսն Ս. Յովսէփ, Ս. Սահակ եպիսկ. Ս. Ղեւոնդ երէց, և այլ քահանայք և սարկաւագունք, եկեղեցւոյ առջեւէն և եկեղեցւոյ հետ ի հանդէս մտեալ, կը քաջալերէին զայն, հրաշալի համարձակութեամբ և Աստուածաբանութեամբ կը հերքէին մոգական կրոնից աղանդն, կը ջատագովէին զքրիստոնէութիւն. և առաջի սրոյ եւ հրոյ պարանոցք և կուրծք տալով, ի շղթայս պրկուելով, գերի վարուելով, կը մարտիրոսանային. որոց սուրբ արիւնը Հայաստանի հողերէն մինչեւ Խուժաստանի ապառաժները ողողեցին. և եղան օրհնութեան պատարագ և զոհք հաճոյական ամենակալին Աստուծոյ, փրկեցաւ Հայազգն։

Եւ այս ամենայն կատարեցաւ առանց մասնակցութեան Հռովմայ. Թերեւս մտօք ալ ուրախակից էր մեր բազմաչարչար աղէտից համար։

Այսպէս գրեթէ ամեն դարը, ամէն տարի, երբ հանդիպած եղեր է փորձութեանց և վտանգաց՝ միայնակ գտնուելով խորամանկութեանց կամ ոյժի առջեւ, ինքզինք պաշտպանած է Հայաստանեայց եկեղեցին, ի հանդէս հանելով ընտիր ընտիրները։

Ահա այսպիսիք են մեր հարք, մեր նախնիք, որք իրաւունք ունին պահանջել մեզմէ որպէս զի անկորուստ և ազատ պահենք իրենցմէ մեզ ժառանգութիւն թողած եկեղեցին, անկարօտ և անկախ պահելով Հռովմէն և այլ եկեղեցապետութենէ։

Ի՛նչպէս. այսքան և առաւել քան զայս երախտիս նախնեաց մոռանա՞լ հայն. ուրանա՞լ հայն, և ընէ իւր անգին, աներծ, և անզուգական սեպհականութիւնն իւր ձեռքով յանձնէ Հռովմայ Պապին. որոյ գործ է ջնջել Ազգին միակ մխիթարութիւնն, Աթոռ և Հայրապետութիւն Ս. Լուսաւորչին. լռեցնել մեր Շարականն ու մեղեդին. կապտել հայ լեզուն, փակել մեր մատեանները, և անոնց տեղ դնել օտարը. որոյ գործ է տիրել մեր վանքերուն և եկեղեցեաց, վկայարանաց, ուխտատեղեաց, գերեզմանաց, զորս վայելին յիշատակք մեր Հարց, և հանգչին պատուական նշխարք առաքելոց, հայրապետաց, նահատակաց, կուսանաց, և ոսկերք առաքինեաց հարցն մերոց իբրեւ գանձ շնորհաց և գեղ կենաց պարգեւեալ մեզ ի Քրիստոսէ. զորս անհետ պիտի ընէ կամ ի Հռովմ փոխադրէ. և անոնց տեղ պիտի տայ մեզ անծանօթներ. և . . . . . Յայնժամ պիտի գոհանայ Հռովմ, որ կարող եղաւ խառնել զհայս իւր հօտը՝ առնել մի հօտ. և ինքն լինել հովիւ, մի հովիւ։

Այն օր վախճան է հինգ հազար տարիէ հետէ ապրած հայ ազգին։

Բայց մեք ապրիլ կուզենք. և պէտք է որ ապրինք. Մեր սիրտը կապեալ է մեր յիշատակաց հետ. մենք կը սիրենք Ս. Էջմիածնի հողն ու փոշին, ուր ծագած է Աստուածային լոյսն, մեզ օտար է Հռովմն և Վատիկան հոյակապ յարկն. մեք անբաժանելի փարեալ կը մնանք մեր եկեղեցւոյն։

Աղօթենք, և ի սրտէ փափագինք որ անջատեալ մեր եղբարք վերադառնան օտար ճանապարհէ, օտարի տունէն դէպ իրենց հայրենական տան ճանապարհ, և մտնեն ի ժառանգութիւն մայրենի սեպհական յարկին, եկեղեցւոյն Հայաստանեայց, ուր պիտի վայելեն ընտանութիւն և քաղցրութիւն, ուր ամենայն ինչ ազգային է և մեր երանելի Նախնեաց սուրբ յիշատակներով լի և կենդանի, որ ունի և կ'ընծայէ իւր որդւոց փրկութիւն ճշմարիտ, և կեանք ճշմարիտ։

Կը կնքենք մեր խօսքը, Ս. Ղեւոնդեանց նուիրեալ շարականին երգով.

«Հեղմամբ արեան սրբոց քոց հօտապետաց
«Զեկեղեցւոյն քո ցրուեալ մանկունս
«Ժողովեա յուրախութիւն,
«Բղխարանեալ տրտմութեամբ,
«Եւ արտասուաց յորդահոս բղխմամբ,
«Փրկութեան մերոյ պարգեւեաց բաշխող։

ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ
ԳԱՐԵԳԻՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ

1888 օգոստ 26
Բերա

ՆՈՐ ԵՐՈՒՍԱՂԷՄ

Հրէական ցեղին զարմանալի կենդանութիւնը յետ իր կրօնքի, իր բարուց, իր դարաւոր սովորութեանց այսչափ փոփոխութիւններուն, իր անհաւատալի տեւողութիւնը, այն անջնջելի կնիքն՝ որով դրոշմուած է նա, եւ զոր չեն կարող ջնջել ոչ ժամանակն, ո՛չ հալածանք, ո՛չ ծառայութիւնք, են եւ պիտի մնան պատմութեան հիացումներէն մին։

Երուսաղէմի կործանումէն վեր՝ Հրեայներ ցրուած կը թափառին երկրագնդի ամբողջ մակերեւոյթին վրայ։ Տարբեր ճակատագրերու ներքեւ, ատտ աքսորուած, անդ բազմաթիւ, երբեմն հարուստ, մերթ չափազանց ողորմելի, կ'երեւի թէ մի խորհրդաւոր կապ զասոնք կը միացնէ ու կ'օգնէ ասոնց պահպանմանը. հակառակ այս ծաւալման, իրենց ցեղի միութիւնը բոլորովին անբացատրելի ազգախօսական մի տեսակ հրաշք է։

Արդէն քանիցս անգամ խնդիր եղած չէ՞ ի մի ժողովել այս ցրուած տարրերն։

Այս ծրագիրն, փայփայուած յանդուգն մտածողներէն, է մին անոնցմէ որոց վրայ կը խօսուի ատեն ատեն։ Բաւական հետաքրքիր շարժում մը կը տեսնուի այս ժամուս Ռուսիոյ Արեւմտեան ու Հարաւ-Արեւելեան գաւառաց մէջ ուր ինչպէս յայտնի է Իսրայելացիներու մեծամասնութիւնը կը բնակի։

Յորմէհետէ նոր օրէնքներ հրատարակուեցան, որք մասնաւորաբար անոնց զինուորական ծառայութենէ ազատ լինելն կ'արգիլեն, աւելի շատ տուգանքն են դարձեր. յորմէհետէ մանաւանդ Ռուսիոյ զանոնք կը հալածէ ու կ'արտաքսէ հազարներով, խորին վհատութիւն մը տիրած է ի նոսա. Կ'զգան որ իրենց անհնարին է, եւ թէ պարտին կա՛մ մեկնիլ, և կամ հասարակաց օրէնքին հպատակիլ։

Արդ, Հրեայներն, որք Մակաբեան ցասման զարմանալի զինուորներ եղան, սակաւ միայն զէնքի տուեստին վրայ կը նային. Այս տեսութիւնն անհերքելի է. Մարդ իր հայրենիքի համար միայն սրտով կը պատերազմի. Արդ, իրենց ցրուումէն վեր, Հրեաներն, յաւիտենական տարագիրներն, ճիշդը զրուցելով, չունին ո՛չ հայրենիք, ո՛չ փառարան. Շատ երկիրներու մէջ, կարծես, տեսակ մը ներողամտութեամբ միայն կ'ապրին ու կը բանակին. Միշտ հովանաւորի մը կամ ժողովրդական շարժման մը ազդեցութեան ներքեւ են։

Ռուսիոյ Հրեայներն հաւանօրէն պիտի համակերպին ամէն բանի, բայց ոչ Զարին բանակաց մէջ ծառայելու. Բայց յայնժամ ի՞նչ պիտի լինին. Ո՞ւր պիտի երթան. Ո՞ր քարի վրայ պիտի հանգչեցնեն Յակոբ իր գլուխը. Փորձեցին Ամերիկա գնալ, սակայն այս գործոն ու երիտասարդ ժողովրդի մէջ ձեզ, աշխատութիւնը իրենց խիստ ծանր, ու չահադիտութիւններ խիստ յանդուգն երեւցան. Յ'Աւստրիա ու ի Գերմանիա հովիւներն իրենց դէմ կը հանեն այնպիսի բրբռակոծութեան մը, յարատեւաբար ամբոխի բարկութեանը կը մատնէ զիրենք. Ասկէց զատ, անդ եւս ոչ նուազ պարտաւորիչ է զինուորական ծառայութիւնը ինչպէս ի Ռուսաստան. Ի Բարիզ, որ Սեմական ցեղին համար Նոր Քանանու երկիր մը եղաւ ընդ երկար, այլ եւս տեղ չկայ հրէից համար, նոր հասնողներն աւելին ինչ որ կայ ստանելու. Արդէն տրտունջներ կը բարձրանան, ու կ'սկսին զՀրեայս խափանարար գտնել։

Ռուսիոյ Հրեաներն ստիպուած են ուրիշ տեղ մը փնտռել ու այս նպատակաւ, մասնաւոր առաքելութիւն մը ղրկեցին ի Պաղեստին տեսնել այն բաժինը զոր կ'ուզէին անդ ձեռք ձգել. Այս առաքելութիւնը վերադարձաւ վեցամսեայ ուղեւորութենէ մի ետք և իր կարծիքն է թէ պէտք է վերջապէս ի բաց թողուլ հրէից՝ Ռուսաստանէն ի Պաղեստին գաղթականութեան ամբողջ գաղափարն։

Այս վերջին խորհրդութեամբ Ռուսիոյ Հրեաներն աւելի զգածեալ կ'երեւին. Բայց մինչդեռ նոքա կը հրաժարին իրենց խորհրդէն, Շիգակօյի հռչակաւոր Րաբբի Մէրթօն-Սիվերթ, գաղափար մը կը տածէ այս մասին, ու այժմ յԱնգլիա անոր գործադրութեանը կը հետամտէ։

Պ. Մէրթօն-Սիվերթի բերած ծրագրաց մէջ, Երուսաղէմի տաճարի ծրագիրն ալ կը տեսնուի. Այս Րաբբին, որ երբեք պատճառաւ չզօնանար, կը կարծէ որ աւելի լաւ է զայն վերանորոգել տղարներու ուժով, քան սպասել այն հրաշքին, որ ըստ գուշակութեան Քրիստոսի, պէտք է մի օր զայն բարձրացնէ երկրի վրայ։

Ասոր հակառակ, խիստ տարակուսական է, որ հին Սրբութիւն սրբոցն նկարէ երբեք իւր փառաւոր գծերն Երուսաղէմի կապուտակ երկնքի վրայ, և Պ. Մէրթօն-Սիվերթ Իսրայէլեան կրօնքի քահանայապետն լինելով, տարին մի անգամ մտնէ Սրբութեան Սրբոցի խորհրդին։

Իսրայէլի ժողովուրդն հաւատարիմ պիտի մնայ իր ճակատագրին, որ է աշխարհի չորս կողմը թափառիլ. Ի՞նչ պիտի լինէր առանց ասոր Թափառական-Հրէայի առասպելը։

Ս.

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱՐԱՆ

(ԳՈՒՐԳԷՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ)

ԳԻՇԵՐՕԹԻԿ ԵՒ ՑԵՐԵԿԵԱՑ

Այս Կրթարանն հաստատուած է 1876 յուլիս 1ին և վաւերացուած է Հասարակաց Կրթութեան պաշտօնէութենէն։

Հայ. Թուրք. Գաղ. և Անգղ. լեզուք, Բնական և Ջափական գիտութիւնք և այլն և այլն կ'աւանդուին ատտ ի ձեռն ուսուցչական ընտիր մարմնոյ մը։ Սնունդն է յոյժ գոհացուցիչ. աշակերտաց բարուց և մաքրութեան հոգ կը տարուի մեծապէս։

Կրթարանիս ԺԳ. տարւոյ շրջանն պիտի սկսի յառաջիկայ օգոստոս 29 երկուշաբթի օրէն. դասախօսութիւնք պիտի սկսին սեպտեմբեր 1ին։

Նոր աշակերտի համար Տնօրէնն ատտ պատրաստ է տեսակցիլ ամէն օր, կէս օրէն յառաջ, Հայկական Կրթարանի մէջ։

Հիմնադիր-Տնօրէն
7—10 1998 Յ. ԳՈՒՐԳԷՆ

ՊԷՐՊԷՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ԳԻՇԵՐՕԹԻԿ և ՑԵՐԵԿԵԱՑ

Յիւսկիւտար

Այս վարժարան, որ 12 տարիներէ ի վեր անընդհատ ու կանոնաւոր յարատեւութեամբ կ'աւանդէ ի ձեռն մի ճշմարտապէս ընտիր ուսուցչական մարմնոյ բազմակողմանի խնամեալ կրթութիւն մը և որ ցարդ բազմաթիւ բարեկիրթ՝ քաջուսումն ու լեզուագէտ երիտասարդներ պատրաստած է Ազատական, Առեւտրական ու Իմաստական ասպարէզներու, կ'սկսի իւր Երեքտասաներորդ շրջան յառաջիկայ Սեպտեմբեր 5ին, Երկուշաբթի օրն։

Նոյն օրէ սկսեալ բաց է վարժարանն, իսկ դասուց սկզբնաւորութիւնն տեղի կ'ունենայ Սեպտեմբեր 13, Երեքշաբթի։

Նոր աշակերտ տալ փափաքող ծնողք կրնան տեսակցիլ Տնօրէնին հետ ամէն օր վարժարանին մէջ։

2041 Հիմնադիր-Տնօրէն
2—8 Ռ. Յ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՀԱՄԱԶԳԵԱՑ ՕՐԻՈՐԴԱՑ ՎԱՐԺԱՐԱՆ

Ի ԲԵՐԱ

Վարժարանիս խնամակալութիւնը պատիւ ունի ծանուցանելու արգոյ հասարակութեան թէ վարժարանս պիտի բացուի երկուշաբթի, 5/17 Սեպտեմբերի։

Ըստ նոր տնօրէնութեանց, անգլիերէն լեզուն ընդհանուր ուսմանց կարգը դասուած է, և պիտի աւանդուի փափաքող աշակերտուհեաց, առանց թոշակի յաւելման։

Ուրիշ տեղեկութեանց համար, կը կը խնդրուի դիմել առ Տիկին Տեսչուհին, Լալէ փողոց, 11։ 2067 1—6

ՄԵՋՊՈՒՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ԱՂՋԿԱՆՑ

Վարժարանիս տասներորդ շրջանի վերամուտը կ'սկսի յառաջիկայ սեպտեմբեր 1ին։

Աշակերտուհիք պարտաւորեալ են օգոստոս 29 երկուշաբթի գտնուիլ ի վարժարան։

Դասախօսութիւնք տեղի կ'ունենան սեպտեմբեր 1, հինգշաբթի օրէն։

Հիմնադիր Տնօրէն
Մ. Ս. ՄԵՋՊՈՒՐԵԱՆ
13 օգոստ 1888 2032
Սկիւտար, Իճատիէ 2—2

ԱՐԱՄԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ԳԱՏԸՔԻՒՂԻ

Արամեան երկսեռ վարժարանին վերամուտը պիտի լինի յառաջիկայ բշ. օգոստոս 29։

Վարժարանին Տնօրէնութիւնը պատրաստ է ամեն օր կէս օրէ յառաջ ընդունիլ այն ծնողքներ որք կ'ուզեն վարժարան ղրկել իրենց զաւակներ։

Ի դիմաց Հոգաբարձութեան
Տնօրէն
Մ. Գ. ՇԱԼԵԱՆ
1888 օգոստոս 26
Գատը գիւղ 2044 2—2

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ ԱՂՋԿԱՆՑ

ՅԻՒՍԿԻՒՏԱՐ

Վարժարանիս յառաջիկայ շրջանը կ'սկսի 1888, սեպտ. 2/14ին. Դպրոցական լեզուն է Անգղիերէն. Ուզողին կ'ուսուցուի նաև Գաղղիերէն, Հայերէն, Յունարէն, Թուրքերէն և Պուլկարերէն։ Ուսման ընթացքը կը պարունակէ գիտութեան այլ և այլ ճիւղերը։

Աւելի և լիակատար տեղեկութեան համար պարտ է նամակաւ դիմել առ Միս Հաուլին, Թիւ 5, Ամերիգան-խան, Կ. Պոլիս։

1993 7—10

ԱԶԴ

Համազգեաց Օրիորդաց վարժարանին Խնամակալութիւնն՝ ի նկատի առնլով թէ շատ ընտանիք կամ իրենց բնակարանին հեռաւորութեան կամ տեղափոխութեանց և կամ գիւղագնացութեան պատճառաւ, կը հարկադրին ստէպ իրենց աղջիկը դպրոցէն հեռացնելով խանգարել նոցա ուսմանց ընթացքն և կամ ի սպառ խափանել իսկ, խնդրեց իւր վարժարանին Տեսուչ Տիկնոջմէն որ հանձն իւր տան մէջ գիշերօթիկ ընդունիլ իւր [illegible]՝ փափաքող աշակերտուհիքը, մանաւանդ որ այս գրութեան մէջ Խնամակալութիւնս ամփոփուած կը տեսնէ միանգամայն թէ՝ գիշերօթիկ վարժարանի մը ամէն առաւելութիւններն՝ առանց անոր բազմագլուխ անպատեհութեանց՝ եւ թէ՝ այն ընտանեկան գորովալից հոգածութիւնը որուն կը կարօտի մանուկն՝ և զոր ապահով եմք թէ պիտի գտնէ վարժարանիս ազնիւ Տեսչուհւոյն բնակարանին մէջ։

Փափաքող ընտանիք ընդունելութեան պայմաններն իմանալու համար դիմելու են առաւօտ ժամ 9էն մինչեւ 5 սկսեալ օգոստոս 20էն, ի Համազգեաց վարժարան Լալէ փողոց թիւ 11, Բերա։

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹԻՒՆ
2000 Համազգեաց
9—12 Օրիորդաց Վարժարանին

ԻԼԱՆ

ՕՐՄԱՆ ՎԷ ՄԷԱՏԻՆ ԻՏԱՐԷՍԻ ՈՒՄՈՒՄԻՅԷՍԻ

Սըվազ վիլայէթի տախիլինտէ Գարահիսարը չարգի սանճաղընտա Սու չէհրի գազասընտա քէյին կէմէն պիլի նամ մէթրուք սիմլի գուրչուն մատէնինին հուտուտու խարիթասը մուճիպինճէ չըմալէն Արտաճըու Թէրէսինտէն պէտ իտուպ կէմէն վէ նամը տիկէրլէ Շարիփ գարյէսի քիլիսասը իլէ Գանլը Թէրէ նօգթալարընտան պիլմիրուր Փաշա չայըրը Թէրէսինէ մունթէհի օլան հաթթը մունքէսիր վէ զարպէն մէզքիւր Փաշա չայըրը Թէրէսինտէն պէտ իլէ ճէնուպ ճինէթինտէ վագը Ծըրսըզ եօլու Թէրէսի պէյնինէ վասըլ օլունան խաթթ մուսթէքիմ վէ ճէնուպէն մէզքիւր Ծըրսըզ Թէրէսինտէն պէտ իլէ չարգ ճինէթինտէ վագը Տանա պուրնու Թէրէսի պէյնինէ վասըլ օլունան խաթթը մուսթաքիմ վէ չարգէն մէզքիւր Տանա պուրնու Թէրէսինտէն պէտ իլէ Այտընլը օղլու տէփէսինէ պէյնինտէն պիլմիրուր մէզ-տէհի հուտուտ օլան Արտաճըու Թէրէսի պէյնինէ վասըլ օլան խաթթը մունքէսիր իլէ մահտուտ օլուպ մատէնի մէզքիւրուն 1710 հէքթար արազի աերուսնինտէ իմալ օլունաճաղընտան մատէնի մէզքիւրուն պիլմուզայէտէ մէատին նիզամիյէսինին օթուզ սէքիզինճի մատտէսի մուճէպինճէ թէվֆիգան 99 սէնէ միւտտէթլէ տէրէօհտէ սինէ թալիպ օլանլարըն Թարիխի իլանտէն իթիպարէն իւչ այ միւտտէթ զարֆընտա Տէրսաատէթտէ Մալիյէ Նէզարէթի ճէլիլէսի տայիրէսինտէ Օրման վէ Մէատին իտարէսի ումումիյէսինէ վէ մահալլինտէ մէրքէզի վիլայէթէ միւրաճաաթ էյլէմէլէրի իլան օլունուր։

28 աղուսթոս 304 1932

AU CROISSANT ‖ Օ ԳՐՈՒԱՍԱՆ

94, Եւրոպէք Գալըրըմ, Վոյվոտայի դիմաց, 94

ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ՀԱՆԴԵՐՁԵՂԻՆԱՑ

Արանց, երիտասարդաց եւ տղայոց համար

Օ Գրուասան վաճառատունը ծանօթ է իւր վայելուչ և հաստատուն հանդերձներով։
Օ Գրուասան վաճառատունը ծանօթ է իւր ամեն տեղի աւելի աժան վաճառքով։

Աշնանային Եղանակ

Ամբողջ քոսթիւմ, կապոյտ, սեւ- չագանակագոյն կամ ֆանթէզի չէվիոթ, զուտ բուրդ, լաւ կարուածք, խնամոք կարուած	32 Ֆրանք
Պանժաքօ և ժիլէ կամ Ռըտէնկօթ և ժիլէ՝ Ռուսալի ֆաստէ կամ գծաւոր, վերջին նորաձեւութիւն	38 Ֆրանք
Գծաւոր բանթալօն, հաստատութիւնն երաշխաւորեալ, վերջին նորելուկ	13 Ֆրանք
Պարտէսիւ միօրինակ կամ գծաւոր, վայելուչ կարուածք, մեծ խնամքով կարուած	36 Ֆրանք

1506

PHŒNIX FIRE OFFICE

ԱՌԱՋՆԱԿԱՐԳ ԱՆԳԼԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԵԱՆ ԸՆԴԴԷՄ ՀՐԴԵՀԻ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՍՈՅԹ Անգլ. ոսկի 1,000,000

"ՖԻՆԻՔՍ"

Հիմնեալ ի Լոնտոն յամին 1782

ՖԻՆԻՔՍ, հիմնեալ առաւել քան մի դար յառաջ, սոսկ հրդեհի ապահովագրութեան ընկերութիւն մ'է՝ որոյ բաժնետեարք Անգղիոյ ամենահարուստ և համբաւաւոր դրամատէրք են՝ ունենալով անսահման պատասխանատուութիւն։

ՖԻՆԻՔՍ ընկերութեան աշխարհահռչակ առատաձեռնութեան մի գլխաւոր ապացոյցն է 16,000,000 Անգլ. ոսկւոյ գումարն զոր ցարդ վճարած է հրդեհի վնասուց համար։ 1799

ՖԻՆԻՔՍ ընկերութիւնն կ'ապահովագրէ ընդդէմ հրդեհի և կայծակի՝ կալուածք, կարասիք և ապրանք՝ յոյժ նպաստաւոր պայմանօք և միջնորդութեամբ ստորագրելոյս, որք ունիմք լիազօր իշխանութիւն կարգադրելու անմիջապէս մեր ապահովագրելոց կրած վնասներն։

Հ. ՍՈՒԱՆ և ԸՆԿ. միակ գործակալք ի Պոլիս և ի Շրջակայս

Թիւ 12, Սանտալճը խան, Ղալաթիա, Աւստրիական Թղթատարատան վերեւ։

ԻԼԱՆ

ՏԷՐՍԱԱՏԷԹ ՄԷՐՔԷԶ ՊԻՏԱՅԷԹ ՄԱՀՔԷՄԷՍԻ ԻՔԻՆՃԻ ՀՈՒԳՈՒՔ ՏԱԻՐԷՍԻ

Գիրգոր Սէրօբեանըն Թաքծը իլթիզամընտա օլան 96 սէնէսի զէպթիյէ րուսումու պէտէլինտէն զայրէդ իֆա միւթէքաքը տէյնի պուլընան 60400 ղրուշէ ֆէսխը իհալէտէն միւթէվէլլիտ զարար վէ զիեանը վագըըն մէրգում իլէ քէֆիլէրի սարաֆ Խաչիկ Մարտիրոսեան վէ Բարսեղ Ստեփանեան վէ Համբարձում Էքմէքճեան վէ Բէթրօ Ղրամատի վէ Ալի Րիզա էֆէնտիլէրտէն Թահսիլի խուսուսունըն Թաքծը գարարա պաղլանմասընը միւստէտի չէհր էմանէթը ճէլիլէսի վէքիլի Հասան Թահսին էֆէնտինին տէրսաատէթ պիտայէթ մահքէմէսի իքինճի հուգուգ տաիրէսինէ իխտա իթտիկի խուսումէտէ մէրգումունտան Բէթրօ Ղրամատի իլէ Ալի Րիզա էֆէնտինին մալիմ պիր իքամէթկեահ վէ մախալը սիւքնալէրի օլմատըղը մուհպիրէր պուլունմըշ վէ պու սուրէթ վէքիլը մուամիլէյհ թարաֆընտան չիֆահէն տախի տէրմիեան օլունմուշ խուսուսինտէն վէ սէնէի հալիյէ իլուլընըն օն իւչիւնճիւ սալը կիւնիւ սաաթ պէշտէ տավայի մէնկասընըն նէգձըն իճրաի մուհաքէմէյի մէհքէմէյի մէզքիւրէյէ մուգարրէր պուլունտուղընտան ուսուլը մուհաքէմէի հուգուգիյէ գանօնը մուվագգաթանըն եիրմի պիրինճի մատտէսինին ֆըգրայի ախիրէսի միւճիպինճէ պու պապտէ Թանզիմ գըլընան տավէթիյէ վարագասընըն պիր նուսխասի մէհքէմէ տիվանխանէսինէ Թալիգ խըլընտըղի վէ եէվմ վէ վագթը մէզքիւրտէ մէրգումունըն պիզզզաթ հազըր պուլունմալարը վէ եախօտ Թարաֆլարընտան սէնէտը մուսատտագըա վէքիլ կէօնտէրմէլէրի իլան օլունուր։

22 աղուսթօս 304 2045

ՕՍՄ. ՀԱՆՐ. ՊԱՐՏՈՒՑ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

Պէյրութի Ջրի ընկերութեան պարտաթղթոց 144.500 անգլ. ոսկւոյ անուանական դրամագլխին վրայ Դրոշմի մէկ առհարիւր տուրքն օրինաւորապէս առնուած ըլլալով, ըստ 10րդ յօդուածի Դրոշմի Օրինաց, կը ծանուցուի արժէթղթոց Թէ [illegible] մի, Ղալաթիա, Պալըքլը խանէ, իրենց հետ ունենալով իրենց պարտատոմսերն և Թըղթական կրկնակ Պորտըրո մը, դրոշմման ձեւակերպութեան համար որ պիտի կատարուի առանց ծախուց։

ԸՆԴՀ. ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

1447 3—7

ՕՍՄ. ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՊԱՆՔԱ

Կը ծանուցուի Օսմ. Հանր. Պարտուց Միացեալ և Արձանագրեալ արժէթղթոց տէրերց Թէ Օսմ. Հանր. Պարտուց Վարչութեան օգոստ. 29ի ազդին համաձայն, կէս առ հարիւր (1/2 %) տոկոս մը պիտի վճարուի իրենց արժէթղթոց անուանական արժէքին վրայ։

Առ այս 1888 սեպտեմբեր 1/13 էն ըսկսեալ պարտին իրենց Արձանագրեալ արժէթղթոց Թիւ 13 և Միացեալ արժէթղթոց Թիւ 10 կտրոնները Թուղթական Պարտըրոներուն հետ ներկայացնել Օսմ. կայս. Պանքային գրասենեկաց ի Պոլիս, Թարաքճըլար, ամեն երկուշաբթի, չորեքշաբթի և հինգշաբթի, առաւօտեան ժամ տասնէն մինչեւ ժամ 2 (Ը. Ե.)։

Ի փոխարէն վերոյնշանակեալ կտրոններուն, պիտի յանձնուի իրենց պատուիրագիր մը որով տասն օր յետոյ պիտի կրնան դանձել իրենց ինկած տոկոսիքը։

Կ. Պոլիս, 30 օգոստոս 1888

1535 5—6

ԱԶԳ. ՕՍՄ. ԾԽԱԽՈՏԻ ՌԷԺԻԻ

955,335,000 Պանտրոլներու հայթայթման համար լինելիք աճուրդն, որ 1888 սեպտեմբեր 5ին (Ն. Տ.) համար ծանուցեալ էր, յետաձգուած է 1888 սեպտեմբեր 7/19ին չորեքշաբթի օր, ժամ 1ին։ Խնդրագիրք կ'ընդունուին մինչեւ 5/17 սեպտեմբեր, երկուշաբթի, կէսօր։ Մինչեւ հիմա վարչութեան ղրկուած բոլոր առաջարկութիւնք ընդունելի են սեպտեմբեր 7/19ի աճուրդին համար, միայն եթէ կանխաւ ետ չառնուին կամ անոնց տեղ ուրիշ չտրուի։

ԸՆԴՀ. ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ

855 3—4

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Ի ՊԷՏՍ ԱԶԳԱՅԻՆ ԴՊՐՈՑԱՑ

ԵՐԿԱՍԻՐԵԱՑ

Հ. ՊԱՒՂՈՍ ԴԱՓԹԱՆ

Վենետիկի Մխիթարեան Վանքէն ելած այն ընտիր դասագիրքն, որ 415 պատկերօք զարդարեալ է, կուգայ մեծ պակաս մը լնուլ մեր վարժարանաց մէջ։ Բնապատմութեան դասագրքերու շարքի մը երրորդ հատորն է այս, որուն առջի երկուքն արդէն հրատարակուած են։ Գինն է 2.50 ֆրանք։ 1991 5—6

Յ. ՍԵՐՈՎԲԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ ՄԱՐՍԻԼԻԱ

Կ'ընդունին ամեն տեսակ արտածութեան եւ ներածութեան ապրանաց յանձնարարութիւններ որք կը գործադրուին շահաւէտ կերպով եւ նպաստաւոր պայմաններով. հասցէ O. Séropian & Cie Marseille. հեռագրոց համար, Séropian Marseille.

1834

ԿԱՏԱՐԵԱԼ ԲՈՒԺՈՒՄՆ ՄՈՐԹԻ ՀԻՒԱՆԴՈՒԹԵԱՆՑ

ՆՈՐԱՀՆԱՐ ԴԵՂԱՀԱՏ ԵՒ ԲՈՄԱՏ

ՊԱՏՐԱՍՏԵԱԼ ԴԵՂԱԳՈՐԾ ՖԷԼԻՔՍ ԹԷՐՃՄԱՆԵԱՆԷ

Վաւերացեալ Արքունի Բժշկական Ճեմարանէն

Ցետ բազմամեայ գործածութեան ստուգուած է Թէ այս անզուգական դեղերը միմիայն դարման են մորթի հիւանդութեանց։ Բոմատին և դեղահատից փոխադարձ գործածութիւնը հիմնովին կը բուժէ [illegible], մահասըլ, Թեւերուն տակ, յօդուածներուն վրայ և մարմնոյն այլ մասանց վրայ պատահած եռքր և ընդհանուր առմամբ որեւէ ապականութենէ ծագումն առած ու և է ախտ, ի բաց առեալ գաղղիական ախտը։ Հմուտ եւ անուանի բժիշկք մշտաւեւ գործածութեամբ հաստատեցին անվիճական ազդեցութիւնն եւ արքունի բժշկական կաճառը զայս ի նըկատ առնելով արտօնեց վաճառումն մասնաւոր հրամանագրաւ։

Կը վաճառի Պալը Գալի ճատտէսի. Պարսից դեսպանատան կից Ֆէլիքս Թէրճմանեանի դեղարանը։ Կեդրոնատեղին է ի Պանճէ Գարու Գասապեան էֆ. դեղօրէից մթերանոցն և ի Կալաթա Վօյվօտայի գլխացը Լէֆաքի դեղարանին ինչպէս նաև ամեն գլխաւոր դեղարաններն։ 1835 25—26

ՄԱՍՆԱՒՈՐ ԱԶԴ

Կը զգուշացնենք հասարակութիւնը չ՚ գնել այն տուփերն որք կարմիր Թանաքով մը յատուկ ստորագրութիւնը չեն կրեր, զի այնպիսիք կեղծ են։ Դեղահատներուն գինն է 20 դահեկան արծաթ, իսկ Բոմատին գինն է 10 դահեկան արծաթ։

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԴԱՐՈՒԼՄԱՆ ԵՒ ՊԼՈՒՄՊԷՐԿԻ

Ղալաթիա Պէօյիւք Միլլէթ խան, միջազգային Թղթատարատան վրայի յարկը



Այս վաճառատան մէջ խիստ աժան գներով կը վաճառուին ամեն տեսակ ճերմակեղէնք, կանանց համար կրկնոցներ, տղայոց համար հագուստներ, կէս հրէազգեստներ, քօռսէներ, օժտի համար ճերմակեղէնք, բանուածքներ, բազմատեսակ գուլպաներ, Թաշկինակներ և այլ այս տեսակ ապրանքներ։

Այս ապրանքներ, որոց ասաքս ալ լաւ տեսակէ են, կը վաճառուին Թէ՛ փոքր և Թէ մեծ քանակութեամբ։

Այս ապրանքներ կը պատրաստուին Վիեննայի և Պերլինի յատուկ գործարանաց մէջ։ Նոյնպէս Անգլիաէն, Իտալիաէն և եւրոպական ուրիշ երկիրներէ եւս ապրանքներ կը բերուին։

Գաւառներէ եղած յանձնարարութիւնք կը կատարուին եթէ փոխարէնը փոխանակագրով և կամ Թղթատարական դրոշմով ղրկուի։



Զը հաւնուած ապրանքները ետ կ'առնուին և ստակը ետ կը տրուի զեղչելով փոխադրութեան ծախքը։ 1180

Հ. ԼԱՆԺ

24, Բէրշէմպէ փողոց) Ղալաթիա
32, Մահմուտիէ փողոց)

ԽՈՀԱՆՈՑԻ ԳՈՐԾԻՆԵՐ

(Պղնձէ, ձուլածոյ և Թափծու երկաթէ)

ԽՈՀԱՆՈՑԻ ՁՄԻՆԵՆԵՐ

ԲԵԴՐՈԼՈՎ ՏԱՔՑՈՂ ՎԱՌԱՐԱՆՆԵՐ

ՊԱՐՏԷԶԻ ԿԱՀԵՐ

Ոռոգութեան գործիներ, Աւազանի շատրուաններ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵՒ ԳԱՂՂԻԱԿԱՆ

ԴԱՆԱԿՆԵՐ

ԵՐԿՐԱԳՈՐԾԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՅՔ

Տատանոցք-կշռորդք-Ցորենի կշռորդ

ԵՐԿԱԹԵԱՅ ՄԱՆՐ ԳՈՐԾԻՔ ԱՄԵՆ ՏԵՍԱԿ

Հայելաւոր պահարան
Սառցարան
Քրէմիէռ
Օտը սէլցի գործիք
Վէռնիք և Ներկ

ԾՈՐԱԿՆԵՐ ԿԱՐՏ—ՌՈՊԵՐ

ԵՐԿԱԹԵՂԷՆՔ ՇԻՆՈՒԱԾԱՆԻՒԹՔ

Մառանի նիւթեր
Գինւոյ մամուլներ
Լոգարան
Տուշ

ՋՐՀԱՆՔ ՀՐՇԷՋ ԴԻՒՐԱՏԱՐ ԳՈՐԾԻՔ

ՔՐԻՍԹՈՖԼԷ ՈՍԿԵՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ 676

HUILE DE FOIE DE MORUE DÉSINFECTÉE

ՇԷՎՐԻԷՐ ՄՈՐՈՒԻ ՋԿԱՆ ԻՒՂ ԶՏՈՒԱԾ

de

CHEVRIER

Առաջնակարգ դեղագործ ի Փարիզ, ասպետ Պատւոյ լէգէոնի, վարձատրեալ Բ. կարգի Մէճիտիէով, քօմանտօր Իզապէլ-լա-Գաթօլիք պատուանշանին։

ՃԵՐՄԱԿ ԵՒ ԹՈՒԽ

Մորիւ ձկան իւղը խայծղանով զտելով, Պ. Շէվրիէ այդ հեղուկին տուած է ախորժելի համ և հոտ, միանգամայն աւելցնելով անոր բուժիչ յատկութիւնները։

Այս դիւտին պատճառաւ հնարիչը մեծամեծ վարձատրութիւններ ստացած է, միտալ և պատւոյ վկայական։

Ամբողջ աշխարհիս բժիշկք կը նախադասեն զայն ամեն տեսակներէն։

ԵՐԿԱԹԱԽԱՌՆ

Պ. Շէվրիէ իւր գիւտը կատարելագործած է [illegible] մը ջերով Մորիւ ձկան երկաթախառն իւղ մը պատրաստելով։ Հակառակ այս յաւելման, իւղը դիւրաւ կը մարսուի և բնաւ ոյնդութիւն չպատճառեր։ Ուստի նախընտրելի է միւս բոլոր երկաթախառն պատրաստութիւններէն և յաջողութեամբ կը գործածուի Թոքախտի, Պրոնշիթի, Վատութեան և Խոյլի համար։ Մանաւանդ կը յարմարի տկարակազմ անձանց։ 711

Ընդհ. մթերանոց, կեդր. դեղրն. Ն. ԹԷՕՏՈՐԻՏԷՍ, 244, Մեծ փողոց Բերայի, Կ. Պոլիս
Միեւնոյն դեղատան մէջ կը գտնուի նաեւ ՇԷՎՐԻԷԻ կազդուրիչ ԳՈԳԱՅԻ ԳԻՆԻՆ։

ԴԵՂ ՋԵՐՄԻ ԵՒ ՏԵՆԴԻՑ

Տօքթօր Այէրի ջերմային հիւանդութեանց այս դեղն՝ որ անխառն բաղադրութիւն մի է զուտ բուսեղինաց, է դարմանաւոր և ազդու կազդուրիչ ամեն տեսակ ֆիզիքական խանգարմանց, որ յառաջ կուգան ճախճախուտ վայրերու ջերմոտ կլիմայից վատ ու ապականեալ օդերէն, որուն օգտակարութիւնը և ապաքինիչ ստոյգ յատկութիւնը երաշխաւորեալ է նորա անհամար արդիւնքը ստոյգ գիտութեամբն։ Այս ֆիզիքական խանգարումներն յառաջ կուգան օդին մէջ լողացող Թունաւոր աննշմարելի նիւթոց միջոցաւ, որք Թոքերէն անցնելով կը մտնեն արեան մէջ, կը խանգարեն լեարդը, և յառաջ կը բերեն տեսակ տեսակ ջերմեր և տենդեր, և արեան Թունաւորումն, որոց աս անուններն տրուած է. ջերմն և սարսուռ (սըթմա), Թաքուն ջերմ (կիզլի իթիմա), պարբերական ջերմն, ընդհատեալ ջերմն, մաղձային տենդ և հրատապ տենդեր։

Թունաւորեալ օդերէ պատճառեալ հիւանդութիւնք կը պատահին այն տեղեր ուր մթնոլորտը ապականեալ և Թունաւորեալ է ճահճներէ կամ ճախճախուտ վայրերէ, հոսեալ ժահահոտ նիւթերով, կամ բաց աղբանոցներէ և տկաններու ծակտիկներէն ելած Թունաւոր կաղերով, զորս մարդիկ կը ծծեն շնչառութեամբ։

Այէրի ջերմի ու տենդից դեղն կը չնչէ այդ Թունաւոր նիւթոց կամ կաղերու ազդեցութիւնը և դուրս կը վանէ զայն մարմնոյն մէջէն, որոյ գործածութիւն ստուգապէս անվտանգ և անվնաս է և օգուտն ստոյգ, միայն Թէ տրուած հրահանգից համեմատ գործածուի։ Կը ծախուի Մինասեան և ընկերաց Ամերիկեան վաճառատան մէջ ի Ղալաթիա Կոստանդնուպոլսոյ։ 581

ԿԱԶՄԱՏՈՒՆ

Ի ԹԱՅՕՂԼԻ ՀԱՆԻՆ

ՖԻՆՃԱՆՃԸԼԱՐ ՍՕԳՈՒԳՈՒ Կ. ՊՈԼԻՍ

Յ. ՄԱՏԹԷՈՍԵԱՆ

Սոյն կազմատան մէջ կան Եւրոպական նորընտիր և կատարելագործեալ մեքենայք որոնցմով կը կազմուին և կը յօրինուին ԶԱՓԱՒՈՐ ԳՆԵՐՈՎ

ԳԻՐՔԵՐ գեղեցիկ և հաստատուն ՏՈՒՓԱՐԿՆԵՐ, վաճառականական եւ ԱՅՏԷՏՐՄԱՆՆԵՐ, խիստ մաքուր և ընտիր։

Ցաճախորդաց դիւրութեան համար կազմատունս ունի իրեն կցորդ վաճառատուն մը Թիւ 27 Ֆինճանճըլար-Եօգուշը, ուր կ'ընդունուին յանձնարարութիւնք և ուր կը վաճառուին նաև գրագրական ամեն տեսակ պիտոյք, ինչպէս Թուղթ, գրիչ, մելան, պայուսակ, գրապանակ եւ եւ։ 736

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Ընդդէմ [illegible], [illegible] և [illegible] [illegible] և այլ [illegible] [illegible]։

Գին 6 ղրուշ

Ամեն կարգի ազգայնոց անհրաժեշտ առողջապահական կարեւոր գործ մը, որ կը վաճառուի ի կեդրոնական գրատուն, Զագմագճըլար, Թիւ 56։ 1788 9—10

ՄԻ ԳՆԷՔ

ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՅ ՄԸ

ԱՌԱՆՑ ՆԱԽԱՊԷՍ ԱՅՑԵԼԵԼՈՒ

ՍԻՆԿԷՐ

Ամերիկեան գործարանի մթերանոցներն

Ի ՂԱԼԱԹԻԱ, Եէնիքէօյ Գալտըրըմ,

120

Քարաքէօյի աղբիւրին դէմ.
Ի ԲԵՐԱ, Կալաթա Սէրայի Լիսէին դէմ
Ի ՊՈԼԻՍ, Մահմուտ փաշա, 90

Ուրիշ ամեն տեղ՝ «Սինկէր»ի կարի մեքենային «կեղծերը» միայն պիտի գտնէք։

ՎՃԱՐՄԱՆ ԴԻՒՐՈՒԹԻՒՆ

(Շաբաթական) 1761

ՄՈՍ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվէրփուլէ և Մանչէսթրէն գիծը բանող

շոգենաւք

Անուանք	Թօնօ	Անուանք	Թօնօ
Ֆէրօս	4200	Սֆինքս	3000
Ծէրօս	4000	Օսայրիս	4000
Օտէմիս	4000	Նէֆթիս	3000
Սէսօստրիս	3250	Իսիս	3000
Թիպս	3250	Լօթիւս	800
Մակեդոն	3250	Օլինթոս	800
Մարէօթիս	3250	Սէթի	700

Դիմել առ Ճ. Վ. ՎԻԹՕԼ և ԸՆԿ.

Ոսքէթլի խան

ՃԷՅՄՍ ՄՈՍ և ԸՆԿ

1891 31, Ճէյմս Սդրիդ, Լիվրբուլ

ՊԱՊԱՅԵԱՆԻ

ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

Լիվէրբուլի, Մանչեսթրի և Օտեսայի գիծը կանոնաւորապէս բանող

Անուանք	Թօնօ	Նաւապետք
Այա Սօֆիա	3,000	Վէպս
Արգալա	2,500	Ռոճէրս
Արգօլիա	2,500	Քրուիքշանք
Լագոնիա	2,500	Ռէյլի
Մասէտոնիա	3,500	Մարշ
Բուլկարիա	2,800	Ֆօթէրկիլ

Ընկերութիւնն օրինաւոր գներով փոխառք կ'ընդունի Եւրոպական երկիրներու և Ամերիկայի համար։

Ամեն դիւրութիւն և հանգստութիւն կը տրուին ուղեւորաց։

Դիմել առ ԴԱՆԻԷԼ ԲՈՒԲԱ ԵՒ ԸՆԿ

1586 Գործակալ

ՖՐԷՏ. ԼԷՅԼԱՆՏ

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

ԱՌԱՋԻՆ ԿԱՐԳԻ ՇՈԳԵՆԱՒՔ

[illegible] կանոնաւորապէս կը բանին Լիվէրբուլ և Պօսթօնի գիծը.

Անուանք	Թօնօ	Անուանք	Թօնօ
Ալճէրիան	2500	Ֆավոնեան	3700
Ալզասեան	2500	Ֆլամինեան	3700
Անատօլեան	2500	Ֆլավեան	3700
Աթէնեան	2500	Իպէրիան	5500
Արմէնեան	3700	Իլլիրեան	5500
Պավարեան	6000	Իտալիան	5500
Պօհէմիան	6000	Լէսպիան	2200
Քարթէճեան	800	Լիպուրնեան	2500
Սայպրիան	2000	Լիտիան	800
Ձուլու	700	Օլիմփոս	700
Էճիպշըն	3700	Պէրսիան	3800
Ֆապեան	3700	Վալէնսիան	6800
Ֆալէրնեան	3700	Վիրճինեան	6800

Ֆլամինեան շոգենաւը, նաւապետ Ալեքսանդր, ընդհանուր վաճառքով Լիվրբուլէն աստ հասաւ։

Ուղեւորներու համար ամեն դիւրութիւն

Աւելի մանրամասնութեանց համար դիմել առ ԷՏՈՒԱՐՏ ԼԱՖՈՆԹԷՆ

Գործակալ

Թիւ 1, Մէհմէտ Ալի փաշա խան, Ղալաթիա.

Նաւատէրք, Պարոնայք Ֆրէտ, Լէյլանտ և ընկ. Լիվրբուլ

Գործակալութիւնք

Կ. Պոլիս, Էտուարտ Լաֆոնթէն.
Ճիպրալթար, Պ. Պ. Քարվըր Եղբարք
Աղեքսանդրիա, Կ. Լ. Վահման և ընկ.
Մալթա, Ս. Ֆավիէրի.
Շիրա, Ս. Վօքօրօրուլօ Որդիք և ընկ
Զմիւռնիա, Պ. Ռէճի և ընկ. 1596

ՇՈԳԵՆԱՒԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՒ ՄԱՐՈՔԵԱՆ

Ն. ՊԱՔԷԼ ԵՒ ԸՆԿ.

Մարսիլիայէ և Բաթումի գիծը կանոնաւորապէս բանող

Սամսոն, Տրապիզոն և Պաթում երթալիք յառաջիկայ շոգենաւն է Արմինիա որ սեպտեմբեր 5ին Մարսիլիայէն և սեպտեմբեր 12ին Կ. Պոլսէն պիտի մեկնի։

Մարսիլիա երթալիք յառաջիկայ շոգենաւն է Սէպօլ որ պիտի մեկնի սեպտ. 17ին։

Ուղեւորք և ապրանք ընդունուին

Նաւուղիքի, ուղեւորութեան և այլ տեղեկութեանց համար

Դիմել առ գործակալ

ԹԻՆԻՐՕԹԷ ԸՂՊԱՐ

Թիւ 17-18 Քիւչիւք Միւ

1606 Մումհանէ փողոց, Թիւ 1

Արտօնատէր Ս. ՏԱՄԱՏԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՑ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻՔ

ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆ ԸՆԴ ՄԷՋ Կ. ՊՈԼՍՈՅ ԵՒ ՔԻՒՉԻՒՔ—ՉԷՔՄԷՃԷԻ

Սկսեալ ի 14 Օգոստոս (Ն. Տ.) 1888, մինչեւ ցնոր տնօրինութիւն

Կ. ՊՈԼՍԷՆ ՔԻՒՉԻՒՔ—ՉԷՔՄԷՃԷ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

	4	52	6	8	10	12	14	16	18	20	22	24	26	28	30	32	34	2								
	Առաւօտ								Իրիկուն																	
	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
Կ. Պոլիս	6 33	7 —	7 55	8 31	9 20	9 50	10 45	11 15	1 10	2 35	3 45	4 35	5 5	5 20	6 4	6 34	7 10	8 15	...	...	...	...	...	...	...	...
Գում-գաբու	6 42	7 14	8 10	8 40	9 29	9 59	10 54	11 24	1 19	2 44	3 54	4 44	5 14	5 29	6 13	6 43	7 19	...	...	...	...	...	...	...	...	...
Ենի-գաբու	6 46	...	8 14	8 44	9 33	10 3	10 58	11 28	1 23	2 48	3 58	4 48	5 18	...	6 17	6 47	7 23	...	...	...	...	...	...	...	...	...
Տավուտ փաշա	...	...	...	...	...	...	—	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
Սամաթիա	6 52	...	8 20	8 50	9 39	10 9	11 4	11 34	1 29	2 54	4 4	4 54	5 24	...	6 23	6 53	7 29	...	...	...	...	...	...	...	...	...
Եէտի-գուլէ	6 57	7 27	8 25	8 55	9 44	10 14	11 9	11 39	1 33	2 59	4 9	4 59	5 27	5 38	6 28	6 56	7 35	...	...	...	...	...	...	...	...	...
Մագրիգիւղ	7 9	7 50	8 36	9 7	9 55	10 26	11 20	11 51	1 45	3 10	4 21	5 11	...	5 50	6 40	...	7 47	8 41	...	...	...	...	...	...	...	...
Այ Ստեֆանօ	7 18	8 3	...	9 16	...	10 35	—	12 2	1 54	...	4 30	5 20	...	5 59	6 49	...	7 57	...	...	...	...	...	...	...	...	...
Քիւչիւք Չէք	...	8 13	...	...	...	...	—	12 10	...	...	...	...	...	...	...	...	8 5	...	...	...	...	...	...	...	...	...
	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...

ՔԻՒՉԻՒՔ—ՉԷՔՄԷՃԷԷՆ Կ. ՊՈԼԻՍ

ԹՈՒԱՀԱՄԱՐ ԿԱՌԱԽՄԲՈՑ

	3	5	1	7	9	11	13	15	17	19	21	23	25	27	29	31	33	51								
	Առաւօտ									Իրիկուն																
	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.	ժ. վ.
Քիւչիւք Չէք	...	6 50	...	...	...	...	...	...	...	1 27	...	...	...	...	...	...	...	6 54	...	...	...	...	...	...	...	...
Այ Ստեֆանօ	6 30	7	...	8 2	...	9 20	...	10 45	...	1 36	2 35	...	4 35	...	5 41	6 4	...	7 7	...	...	...	...	...	...	...	...
Մագրիգիւղ	6 40	7 10	7 51	8 11	8 41	9 30	10	10 55	11 25	1 46	2 45	3 55	4 45	...	5 51	6 14	...	7 22	...	...	...	...	...	...	...	...
Եէտի-գուլէ	6 55	7 24	...	8 25	8 55	9 44	10 14	11 9	11 39	1 58	2 59	4 9	4 59	5 42	6 3	6 28	7 4	7 39	...	...	...	...	...	...	...	...
Սամաթիա	6 59	7 28	...	8 29	8 59	9 48	10 18	11 13	11 43	2 2	3 3	4 13	5 3	5 46	...	6 32	7 8	...	...	...	...	...	...	...	...	...
Տավուտ փաշա	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...
Ենի-գաբու	7 5	7 34	...	8 35	9 5	9 54	10 24	11 19	11 49	2 8	3 9	4 19	5 9	5 52	...	6 38	7 14	...	...	...	...	...	...	...	...	...
Գում-գաբու	7 9	7 38	...	8 39	9 9	9 58	10 28	11 23	11 53	2 12	3 13	4 23	5 13	5 56	6 12	6 42	7 18	7 51	...	...	...	...	...	...	...	...
Կ. Պոլիս	7 17	7 46	8 15	8 47	9 17	10 6	10 36	11 31	12 1	2 20	3 21	4 31	5 20	6 4	6 20	6 50	7 26	8	...	...	...	...	...	...	...	...
	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...	...

Փոքր ծրարներն անխտիր կ'ընդունուին ամեն կառախմբի մէջ, իսկ մեծ ծրարք Պոլսէն Մագրի գիւղ կամ աւելի հեռի կայարանաց միջեւ բանող կառախմբոց մէջ միայն կ'ընդունուին։ Թիւ 1 և 2 կառախմբերն ունին Ա. Բ. և Գ. կարգի վակոններ. միւս կառախմբերն ունին միայն Բ. և Գ. կարգի վակոններ։ 576